23984

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

331.87
Ի-61

# ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՏՆՏՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԲՐԻԳԱԴԸ

ՊԵՏՀՐԱՏ 1932 ԵՐԵՎԱՆ

15 JAN 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

31. 87
Ի - 61

# Ի՞ՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՏՆՏՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԲՐԻԳԱԴԸ

*...«Հարկավոր է նոր ձևով կազմակերպել աշխատանքը, հարկավոր է այնպես դասավորել ուժերը, վորպեսզի բանվորների ամեն մի խումբ պատասխանատու լինի աշխատանքի, մեխանիզմների, գործիքների, աշխատանքի վորակի համար»...*

*...«Պետք է գտնել կուտակման նոր աղբյուրներ, վերացնել անտնտեսավարությունը, արմատացնել տնտեսական հաշվարկը, իջեցնել ինքնարժեքը և ավելացնել ներարդյունաբերական կուտակումը»...*

(Տնտեսավարների 1931 թ. 23/VI-ի խորհրդակցությունում ընկ. Ստալինի արտասանած ճառից)։

ԵՏՀՐԱՏ 1932 ԵՐԵՎԱՆ

23984
26 APR 2013

Պետհրատի տպարան
Հրատարակ. № 1946
Գլավլ. № 6994 (բ)
Պատ. № 6404
Տիր. 3.000
▽

Թարգմ. կրճատումներով՝ Հ. ԼԻՎՈՆՅԱՆ

Հանձնված է արտադրության 14/XII ՍՏ. Ֆ. Ա.

# ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՍՏԻՃԱՆԸ

Միլիոնների շարժում դարձած սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը մի շարք փայլուն հաղթանակներ տարան, վորոնք ապահովում են հնգամյակի նախաժամկետ կատարումը, հնգամյակի, վորը բուրժուական աշխարհը համարում եր իբրև անիրագործելի մի ցնորք։

Միմիայն քաղքենիններն այժմ կարող են խոսել սոցիալիստական մրցության և հարվածայնության անկման մասին։

Հակառակ դասակարգային թշնամիների և նրանց գործակալ ոպորտունիստների ատելությանն ու բամբասանքին, սոցիալիստական մրցությունը յեվ հարվածայնությունը ընդլայնվում ու ամրանում են, սոցիալիստական աշխատանքի նորանոր ձևեր հայտնաբերելով։

Վերջին ժամանակներս սոցիալիստական մրցության յեվ հարվածայնության զարգացման ասպարիզում ամենանշանակալից յերևույթն են հանդիսանում տնտհաշվարկային բրիգադները։ Հարվածայնության համար սոցիալիստական արդյունաբերության հերթական խնդիրներին ամենից ավելի համապատասխանող կազմակերպչական ձևի վորոնման շրջանը վերջանում է տնտհաշվարկային բրիգադով։ Այդ հերթական խնդիրներն են՝ հավասարեցման ու դիմազրկության վերացումը, աշխատանքի ճիշտ կազմակերպումը, պլանի վոչ միայն քանակական, այլև վորակական ցուցանիշների անպայման կատարումը, արտադրության տեխնիկայի լիակատար տիրապետումը տնտեսական կադրերի կողմից, արտադրության հետագա ռացիոնալացումը։

Տնտհաշվարկային բրիգադներն արդեն խիստ լայն տարածում ունեն։ Նրանց շարքերում այժմ տասնյակ հազարավոր առաջավոր հարվածայիններ կան։ Լենինգրադի մարզում մայիսի 15-ին

51 ձեռնարկություններում կային 676 տնտհաշվարկային բրիգադ։ Հուլիսի 1-ին տնտհաշվարկային բրիգադների թիվը հասավ 2892-ի, իսկ տնտհաշվարկային շարժումը տարածվեց 164 ձեռնարկություններում։ Օգոստոսի 1-ին տնտհաշվարկային բրիգադների թիվը բարձրացավ 5174-ի ընդամենը 197 ձեռնարկություններում։

Տնտհաշվարկային բրիգադներն առաջին իսկ օրվանից ունեցան բացառիկ արտադրական նվաճումներ պլանների թե քանակական և թե վորակական կատարման խնդրում։ Ամիս առ ամիս իրենց պլանները կատարող ու գերակատարող մի շարք խոշոր գործարանների («Կալլինինի», «Սեկարեկ» և այլն Լենինգրադում) փայլուն հաջողությունները պայմանավորվեցին գլխավորապես շնորհիվ այն հանգամանքի, վոր այդ գործարաններում լայն զարգացում ունեցավ բրիգադային տնտհաշվարկը։ Տնտհաշվարկային բրիգադը, վեր աշխատանքի կազմակերպման և ղեկավարության լավ հավասարեցման վերացման հիման վրա, դառնում է լավ պետք է սոցիալիստական մրցության լավ հարվածայնության հիմնական ձևը։

Ցեղան մարդիկ, վորոնք ազդակ բարձրացրին բրիգադային տնտհաշվարկի դեմ, նույնիսկ վախենք դրանում տեսնում եյին տնտհաշվարկի խեղաթյուրում, մյուսները՝ մրցության վերացում։ Բրիգադային տնտհաշվարկի թե մեկ և թե մյուս հակառակորդները հավասարապես սխալվում եյին։ Նրանք չեյին հասկանում, վոր բրիգադում տնտհաշվարկ արմատացնելով, թե տնտհաշվարկը և թե սոցիալիստական մրցությունը փոխադրվում են նոր, ավելի բարձր աստիճանի։

Միլիոնների դրոշը դարձած տնտհաշվարկը թափանցում է արտադրության մինչև սիրտը—դազգյահն ու ագրեգատը, վորով անչափ հեշտանում է ցեխի ու ձեռնարկության—մեր արդյունաբերության այդ գլխավոր օղակների—տնտհաշվարկի իրագործումը։

Սոցիալիստական մրցությունը տնտհաշվարկի հետ շաղկապվելով ստանում է չափազանց մեծ արդյունավետություն, վորովհետև բրիգադայի կողմից քանակական ու վորակական ցուցանիշների կատարման կարևորագույն պայմանները—պլանը դազգյահին ու յուրաքանչյուր անհատ բանվորին հասցնելը, հումքի ու նյութերի ծախսման ճիշտ նորմաները սահմանելը, գործավարձը ռացիոնալիզատորական միջոցառումների համար պարգևատրելը,—բոլոր այս պայմանները, վորոնք առաջ ցանկալի



եյին համարվում, այժմ, բրիգադը տնտհաշվարկի անցկացնելիս դառնում են օրենք պարտադիր։ Տնտհաշվարկային բրիգադն աշխատում է ցեխի վարչության հետ կնքած պայմանագրի հիման վրա. այս պայմանագիրն իր մեջ պարունակում է յերկու կողմերի կոնկրետ պարտավորությունները, վորոնք ապահովում են բրիգադին տրված քանակական ու վորակական առաջադրությունների և նրա հանդիպական պլանի կատարումը, անպայման ամեն ամիս պարգևատրման գումարը վճարելու պայմանով։ Պարգևատրման գումարի չափը նշվում է պայմանագրում, վորպես վարչության տված ցուցանիշների գերակատարման շնորհիվ առաջացող տնտեսման հաստատուն տոկոս։

Աշխատանքի արտադրողականության բարձրացման համար բանվորների շահագրգռվածության ավելացում—ահա այն, վոր դրված է բրիգադային տնտհաշվարկի հիմքում և նոր ու հզոր խթան է ստեղծում սոցիալիստական մրցության զարգացման համար։ Բրիգադային տնտհաշվարկը վոչ միայն չի վերացնում մրցությունը, այլ, ընդհակառակը, նրա համար ամուր նյութական բազա ստեղծելով մասսաների ստեղծագործ նախաձեռնության նոր ծավալման պայմաններ է ապահովում։

Կան մարդիկ, վորոնք սոցիալիստական մրցությունը բանվորների նյութական շահագրգռվածության բարձրացման հետ շաղկապելու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու մեջ գրեթե սոցիալիստական մրցության գռեհկացում են տեսնում։ Այս բարեպաշտ ձևացող մանր բուրժուական «հավասարեցնողները» վոչինչ չունեն ընդհանուր բոլշևիկյան կուսակցության տեսակետի հետ։ Սոցիալիստական մրցությունն ու բանվորների շահագրգռվածությունը աշխատանքի արտադրողականության բարձրացման համար, վոչ միայն չպետք է իրարից կտրվեն ու հակադրվեն իրար, այլ ընդհակառակն, անպայման պետք է ուղեկցեն իրար, ճիշտ այնպես, ինչպես վոր սոցիալիստական շինարարության աճող պահանջները ուղեկցում է պրոլետարական մասսաների բարեկեցության անշեղ աճումը։ Հենց արտադրության աճման և բանվորների նյութական դրության բարելավման այս զուգորդման մեջ է մեր կարգերի հիմնական մի տարբերությունը կապիտալիստական կարգերից և հենց այդ տարբերության մեջ է մեր ինդուստրացման բոլշևիկյան տեմպերի հիմնական աղբյուրներից մեկը։

Հարվածային բրիգադները տնտեսական հաշվարկի փոխադ-

ումը սոցիալիստական մրցության և հարվածայնության նոր աստիճանն է հանդիսանում, և այդ աստիճանի վրա մասսաների այս մեծ շարժումը կամրանա էլ ավելի մեծ չափերով, ապահովելով սոցիալիզմի նոր հաղթանակներ մեր յերկրում։

ԽՍՀՄ ԺՏԳԽ-ի և ՀԱՄԿԽ-ի յերեկ հրապարակված վորոշումը տնտհաշվարկային բրիգադների մասին, պահանջում է տնտեսական և պրոֆեսիոնալ կազմակերպություններից՝ ստեղծել բոլոր պայմանները բրիգադները հաջողությամբ ու լայն չափով տնտհաշվարկի անցկացնելու համար, ոժանդակություն ցույց տալ յեվ գլխավորել այս նոր շարժումը։

Այս վորոշումը գործարանային ու ցեխային վարչություններին պարտավորեցնում է վերացնել սարքավորման դիմազրկությունը և աշխատանքի վարձատրության հավասարեցումը՝ բրիգադներին ամրացնելով վորոշ դազգյաններ ու ագրեգատներ և գործավարձի անցնելով, կանոնավորել հաշվառումն ու ճիշտ տեխնիկական նորմավորումը։ Վորոշումը սահմանում է բրիգադում տնտհաշվարկն իրագործելու հաստատուն կարգ և պահանջում է վերջ դնել բրիգադները տնտհաշվարկի անցկացնելու պրակտիկայում տեղի ունեցած աղավաղումներին, մասնավորապես բանվորների նյութական տուգանք սահմանելու փորձերին, վարչական ճանապարհով տնտհաշվարկային բրիգադներ ստեղծելու փորձերին։

ԺՏԳԽ-ի և ՀԱՄԿԽ-ի վորոշումը պետք է բացատրվի բանվորական ամենալայն մասսաներին և իրոք յելակետ պետք է ծառայի հարվածային բրիգադները մասսայաբար տնտհաշվարկի անցկացնելու համար։

Առանձնապես մեծ խնդիրներ է դնում այս վորոշումը պրոֆեսիոնալ կազմակերպությունների վրա։ Մի շարք տեղերում տնտհաշվարկային բրիգադներ ստեղծող մասսաների նախաձեռնությունը չի հանդիպել պրոֆկազմակերպությունների անհրաժեշտ աջակցության ու ղեկավարության։ Այդ ցույց է տալիս, վոր շատ պրոֆկազմակերպություններ դեռևս չեն կարողանում վերցնել մասսաների նախաձեռնության դրական փորձը — արագորեն ընդհանրացնել այդ նախաձեռնությունը և առաջավոր ջոկատներից հետո նրանով զինել նաև վողջ պրոլետարական բանակը։ Սոցիալիստական մրցության և հարվածայնության զարգացումը պետք է ուշադրության կենտրոնակետ հանդիսանա պրոֆկազմակերպությունների համար, վորոնք պարտավոր են ներկայումս



ձեռք զարկել տնտհաշվարկային բրիգադի կազմակերպմանը, վորպես հարվածայնության հիմնական ձևի, և ապահովեն նրա ամենալայն տարածումը։

Տնտհաշվարկային բրիգադների մասին ԺՏԳԽ-ի և ՀԱՄԿԽ-ի ընդունած վորոշման իրագործումը հիմնական ձևերից մեկն է այն նոր ձևի վերակառուցման համար, վորը, համաձայն ընկ. Ստալինի ցուցմունքների, սկսված է գործարաններում և ամենակարճ ժամանակում պետք է մինչև վերջը հասցվի՝ ինչ գնով ուզում է լինի։

Մեր արդյունաբերության արդֆինպլանի կատարման այն վեց պայմանների թվում, վորոնց մասին խոսում էր ընկ. Ստալինը տնտեսավարների խորհրդակցությունում, թվով վեցերորդ, բայց մյուսների չափ կարևոր պայմանն է հանդիսանում տնտհաշվարկը։

Ձեռնարկության կառավարման նոր մեթոդներից դուրս, հետևողականորեն կիրառվող տնտհաշվարկից դուրս անհնարին է արդյունաբերության հաջող ղեկավարությունը։ Հնգամյակի վճռական տարվա արդֆինպլանի համար հարկ յեղածին պես պայքարում է միայն այն մարդը, ով վոչ թե խոսքով, այլ գործով, ամբողջ բոլշևիկյան յեռանդով պայքարում է ընկ. Ստալինի ցուցմունքների և այդ թվում տնտհաշվարկի իրագործման համար։ Տնտհաշվարկը պետք է դառնա սոցիալիստական ձեռնարկության կառավարման հիմքը, արդֆինպլանի համար պայքարելու գլխավոր լծակներից մեկը, սոցիալիստական կուտակման համար յուրաքանչյուր գործարանում, ցեխում և ագրեգատում յեղած հսկայական քանակությամբ ներքին ռեսուրսները մոբիլիզացիայի յենթարկելու միջոցը։ Ձեռնարկությունների ու միավորումների միջև պայմանագրային հարաբերությունները ամրացնելու և արդյունաբերության նոր կարգի վարկավորումն անցկացնելու հետ միասին անհրաժեշտ է տնտեսավարների ու կուսակցական կազմակերպությունների ջանքերը կենտրոնացնել իրագործելու տնտհաշվարկը ցեխերում, այն հսկայական քանակությամբ ներքին ռեսուրսներ ագրեգատների մոտ, վորը պետք է մոբիլիզացիայի յենթարկի տնտհաշվարկը։

Տնտհաշվարկային բրիգադը, ինչպես այդ ցույց է տվել պրակտիկան, մասսաներին տնտհաշվարկի արմատացման ու ամրացման գործին մասնակից դարձնելու լավագույն ձևն է հանդիսանում։ Տնտհաշվարկը, վոր իրագործվում է մասսաների ձեռքով, կհան-

դիսանա վորպես իսկական սոցիալիստական տնտհաշվարկ և կարդարացնի այն հույսերը, վորը դնում է նրա վրա կուսակցությունը:

Տնտհաշվարկի հետ միասին և նրան զուգընթաց առաջացան ու զարգացան սոցիալիստական մրցության և հարվածայնության ուրիշ նոր ձևեր ևս: Նրանցից առանձին ուժանդակության և ուշադրության է արժանի հերթային—հանդիպական պլանը: Մի շարք ձեռնարկությունների (Իլյիչի անվան մետալուրգիական գործարան, Ձերժինսկու անվան կաշեգործարան և այլն) փորձը ցույց տվեց, վոր հերթային—հանդիպական պլանը մրցության առանձնապես արդյունավետ ձև է հանդիսանում, մանավանդ, յերբ նա զուգակցվում է բրիգադային տնտհաշվարկի հետ:

Մենք մտնում ենք հնգամյակի յերրորդ տարվա վերջին յեռամսյակը: Չնայած արդյունաբերության ճյուղերի ճնշող մեծամասնության արտադրանքի խոշոր աճմանը նախորդ տարվա համեմատությամբ, մի ամբողջ շարք ձեռնարկությունների փայլուն աշխատանքի կողքին շատ գործարաններ և արդյունաբերության մի շարք ճյուղեր յետ են մնում, պլանները չեն կատարում: Պետք է բոլոր միջոցները ձեռք առնվեն, վորպեսզի վերջին յեռամսյակում յետ մնացած ձեռնարկությունները վերջապես բոլշևիկյան տեմպեր վերցնեն, վերակառուցեն իրենց աշխատանքը, բաց թողածը վերադարձնեն և պլանները կատարեն:

Վերակառուցումը չի կարող հաջողությամբ կատարվել առանց բանվորական ամենալայն մասսաներին ընկ. Ստալինի առաջադրած խնդիրների կենսագործման շուրջը մոբիլիզացիայի յենթարկելու, առանց սոցիալիստական մրցության և հարվածայնության նոր, հուժկու ալիք բարձրացնելու:

Կասկած չկա, վոր մասսաների աշխատանքային նոր վերելքի, պրոլետարիատի բոլոր ստեղծարար ուժերի զարգացման հիման վրա հնգամյակի վճռական տարվա պատմական խնդիրները կկատարվեն՝ հակառակ օպորտունիզմի և մերձկուսակցական քաղքենիության բոլոր սպասումներին:

(«Պրավդա»-յի 1931 թ. սեպտեմբերի 13-ի առաջնորդողը):

---



## ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՏՆՏՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԲՐԻԳԱԴԸ

Մեր յերկրի պրոլետարիատը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ հաջողությամբ կատարում է սոցիալիստական շինարարության հնգամյա պլանը: Մենք արդեն գտնվում ենք հնգամյակի յեզրափակման տարվա նախօրյակին, մոտենալով Խ. Միության սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի ավարտման տարվա յերրորդ, վճռական տարվա վախճանին: Սոցիալիզմի կառուցման բոլշևիկյան տեմպերի համար մղած պայքարում Լենինգրադի առաջավոր ձեռնարկությունների պրոլետարները ստեղծեցին մրցության նոր, ավելի բարձր մի ձև—տնտհաշվարկային բրիգադը: Կարճ ժամանակում մի ամբողջ շարժում առաջացավ տնտհաշվարկային բրիգադներ կազմակերպելու ուղղությամբ:

Ընկ. Կապկովի ձուլողների առաջին տնտհաշվարկային բրիգադն ստեղծվեց 1931 թ. փետրվարին Լենինի անվան գործարանում: Նա առաջացավ արտադրանքի վորակի համար արշավի դուրս յեկած «Էլեկտրոապարատ» գործարանի բանվորների դիմումը քննարկելու կապակցությամբ: Իր աշխատանքի առաջին իսկ ամսում ընկ. Կապկովի բրիգադը ցույց տվեց փայլուն արդյունքներ:

Մարտ ամսում ձուլվածքի համար պլանով նախատեսված 1684 ժամվա փոխարեն բրիգադը գործադրեց միայն 1099 ժամ: Խոտանը, թուջաձուլական ցեխի այդ հիվանդոտ կողմը, մինչև այդ կազմում էր անուղղելին՝ 15 %, իսկ ուղղելին՝ 18,5 %: Սահմանված ձուլման խոտանի նորմա՝ 5 %, իսկ մեքենայական մշակմանը՝ 3 %: Կապկովի բրիգադը վոչ մի խոտան չտվեց: Ապրիլ ամսում 28.505 կլգ. ձուլվածքի համար բրիգադը գործադրեց 1465 ժամվա դիմաց միայն 1050 ժամ, բարձրացնելով աշխատանքի արտադրողականությունը 37 %-ով և իջեցնելով ինքնարժեքը 81 %-ով:

Գոլկովի բրիգադից հետո կազմակերպվեց ընկ. Նիկոլաեվի բրիգադը Բալթիական գործարանում և ընկ. Դավայնեսի բրիգադը «Սևկաբել» գործարանում. Առաջին տնտհաշվարկային բրիգադների փորձին այնուհետև ընդառաջեցին նաև Լենինգրադի, ապա նաև Մոսկվայի մի շարք ձեռնարկությունների հարվածային բանվորները:

Տնտհաշվարկային բրիգադների աշխատանքի արդյունքները չափազանց պերճախոս են: Այնտեղ, ուր այսպիսիք ստեղծված են, բարձրացել է արտադրանքը, լավացել է որակը, միաժամանակ բարձրացել է նաև աշխատավարձը: Ներկայումս տնտհաշվարկային բրիգադներ կազմակերպելու շարժումը տարածվել է Մոսկվայի և Լենինգրադի սահմաններից շատ հեռու: Յեվ Դոնբասում և Ուրալում և ուկրաինական գործարաններում — մեր անծայրածիր Միության բոլոր արդյունաբերական շրջաններում դուք կհանդիպեք աշխատանքի սոցիալիստական կազմակերպման այս նոր ձևի մասնակիցների: Տնտհաշվարկային բրիգադների շարժումը ընդունել է իրոք մասսայական բնույթ. Բավական է մատնանշել, որ ներկայումս (սեպտեմբերի սկզբներին) մենք ունենք ավելի քան քսան հազար տնտհաշվարկային բրիգադներ, որից մոտ 8000-ը Լենինգրադում և 6000-ից ավելի Մոսկվայում:

Տնտհաշվարկային բրիգադների արմատացման գործնական փորձը միմիայն շարժման այս քանակական աճմամբ չի սահմանափակվում: Վերջին ժամանակներս լայն տարածում է ունեցել տնտհաշվարկային բրիգադներում հերթային-հանդիպական պլան կիրառելու փորձը: Մարիուպոլի Լենինի անվան գործարանի հարվածային բանվորների այս նախաձեռնությանն ընդառաջեցին Զեմլյաչկայի անվան գործարանի հարվածայինները, ապա այդ տարածվեց նաև Մոսկվայի մի շարք գործարաններում: Այստեղ, տնտհաշվարկային բրիգադներում հերթային հանդիպական պլաններ կիրառելու պրակտիկայում մենք տեսնում ենք աշխատանքի ու արտադրության նկատմամբ իսկական կոմունիստական վերաբերմունքի արտահայտություն:

Տնտհաշվարկային բրիգադների ու հերթային-հանդիպական պլանների կազմակերպումը, այսպիսով, հանդիսանում է պրակտիկ մի գործողություն ի պատասխան ընկ. Ստալինի, որ կոչ էր անում մեր արդյունաբերության զարգացման նոր պայմաններում աշխատել նոր ձևով: «Հարկավոր է նոր ձևով կազմակերպել աշխատանքը, հարկավոր է ուժերն այնպես դասավորել, որպեսզի բանվորների ամեն մի խումբ պատասխանատու լինի աշխատանքի համար, մեխանիզմների, դազգյահների համար, աշխատանքի որակի համար», — այսպես ձևակերպեց ընկ. Ստալինը դիմազրկության դեմ պայքարելու խնդիրը:

Տնտհաշվարկային բրիգադը և հերթային-հանդիպականը գործնականորեն իրականացնում են նաև հետևյալ պայմանը, որ առաջադրեց ընկ. Ստալինը տնտեսավարների հունիսյան խորհրդակցությունում — «գործի դնել կուտակման նոր աղբյուրները, վերացնել անտնտեսվարությունը, արմատացնել տնտհաշվարկը, իջեցնել ինքնարժեքը և բարձրացնել ներարդյունաբերական կուտակումը»: Այս պայմանի կատարումը կապահովի մեր սոցիալիստական շինարարության տեմպերի ուժեղացումը:

Նկատի ունենալով տնտհաշվարկային բրիգադների բացառիկ դերը հնգամյակի պլանների կատարման գործում, Մոսկվայի և Լենինգրադի պրոֆմիությունները միմյանց հետ սոցմրցման պայմանագիր են կնքել տնտհաշվարկային բրիգադներ կազմակերպելու համար:

Բրիգադների կազմակերպման ու աշխատանքի մի շարք հիմնական հարցեր արծարծվելու յեն ներկա բրոշյուրում:

## 1. ԻՆՉ Է ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ԱՆՑԱԾ ԲՐԻԳԱԴԸ

Աշխատանքի սոցիալիստական կազմակերպման նոր ձև — տնտեսական հաշվարկի անցած բրիգադը առաջացել է սոցիալիստական մրցության, հարվածայնության և հանդիպական պլանավորման հիման վրա:

Որպես աշխատանքի կազմակերպման ամենից ավելի բարձր ձևը տվյալ շրջանում, տնտհաշվարկային բրիգադն ապահովում է արդֆինպլանի ո՛չ միայն քանակական, այլև, որ առանձնապես կարևոր է ներկայումս, որակական ցուցանիշների կատարումն ու գերակատարումն առաջին հերթին հարվածային բրիգադի կողմից: Իսկ հարվածային բրիգադը՝ համաձայն XVI կուսհամագումարի սահմանման, «բանվորներին արտադրության կառավարման մեջ ներգրավելու սկզբնական բջիջն է»: Այսպիսով, տնտեսական հաշվարկի անցած բրիգադն իրենից ներկայացնում է բանվորներին արտադրության կառավարման գործում ներգրավելու հարցի գործնական լուծումը:

Տնտհաշվարկային բրիգադները հասարակական—տեխնական

նշանակությունը բխում է հենց նրանց ծագման պատմությունից։ Առաջին բրիգադները կազմակերպվեցին վորակի համար մղվող պայքարի հետևանքով։ Հատկապես եռամսյակի և հնգամյակի յերրորդ, վճռական տարվա պլանների կատարման պրոցեսում մենք ամենամեծ դժվարությունների հանդիպեցինք վորակական ցուցանիշների կատարման խնդրում։

Վորակական ցուցանիշները պլանի «նեղ տեղը» դարձան։ Վորակական ցուցանիշները փաստորեն չհասցվեցին անհատ բանվորին։ Սոցմրցման և հարվածայնության պայմանագրերում վորակական ցուցանիշները չափազանց ընդհանուր ձևակերպված էին, ուստի և չէին կարող հասցվել բրիգադին, դազգյահին, ագրեգատին և այլն։ Տնտհաշվարկային բրիգադների համար սկսված շարժումը, ինչպես այդ ցույց է տալիս առաջին բրիգադների փորձը, իրեն առաջադրում և հաջողությամբ լուծում է արդֆինպլանի վորակական ցուցանիշների կատարման պրոբլեմը։

Դրա հետ միասին՝ տնտհաշվարկային բրիգադը վիթխարի չափով բարձրացնում է հարվածային բանվորի՝ «արտադրության այդ կենտրոնական դեմքի» (ՀԱՄԿԽ-ի V պլենումի սահմանումով) արտադրական ակտիվությունը։ Այս տեսակետից տնտհաշվարկային բրիգադը չափազանց լայն հեռանկարներ է բացանում պրոֆմիությունների արտադրական—տնտեսական աշխատանքի առաջ։

Արտադրության ասպարիզում ամենամոտակա խնդիրն է հանդիսանում այսօր՝ վերացնել դիմազրկությունը, բարելավել աշխատանքի կազմակերպումը, վերացնել անտնտեսավարությունը և ամրացնել տնտեսական հաշվարկը ձեռնարկություններում։ Ցեխի տնտհաշվարկը հիմնված լինելով լիակատար միանձնյա ղեկավարության և տնտհաշվարկի արմատացման վրա վարչա-տնտեսական գծով, հենվում է տնտհաշվարկային բրիգադներում կազմակերպված բանվորների մասնակցության և նախաձեռնության վրա։

Տնտհաշվարկային բրիգադն օգնում է վերացնելու դիմազրկությունը՝ «արդյունաբերության այդ խոցը», ինչպես կասեր ընկ. Ստալինը։

Տնտհաշվարկային բրիգադի մեջ մտնող յուրաքանչյուր առանձին բանվոր ակնառու ու կոնկրետ կերպով իր արտադրական աշխատանքի փորձով կպարզի, թե ինչ բան է արտադրական ծախքերի նախահաշիվը, ինչպիսի ռուբլիներով ու կոպեկ-



ներով է չափվում այդ նախահաշվի յուրաքանչյուր առանձին հոդվածը. նա ինքն (և իր բրիգադը) ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ իր արտադրածի արժեքի ու վորակի վրա, յերբ նա օգտագործում է բանվորական ժամանակը, նյութերը, սարքավորումները, գործիքները և ամեն տեսակ «մանրունքները», վորոնք, սակայն, շատ խոշոր գումարներ են նստում խորհրդային ժողտնտեսությանը։ Հաջողությամբ կատարելով և գերակատարելով բրիգադի արդֆինպլանը, իջեցնելով ինքնարժեքը և լավացնելով արտադրանքի վորակը, տնտհաշվարկային բրիգադը դրանով իսկ ներարդյունաբերական կուտակման լրացուցիչ աղբյուրներ է ստեղծում։

Տնտհաշվարկային բրիգադի տնտեսական-քաղաքական նշանակությունը նրանումն է կայանում, վոր նա, իբրև ձեռնարկության արտադրական կյանքի հիմնական սկզբնական օղակ, իր մեջ կենտրոնացնում է արտադրական—տնտեսական կառավարման բոլոր սկզբնական հիմունքները։ Տնտեսական հաշվարկի անցած բրիգադը դառնում է օպերատիվ պլանավորման սկզբնական բջիջը, դառնում է միաժամանակ այնպիսի մի բրիգադ, վորը պայքարում է վորակի համար, ինքնարժեքի իջեցման համար, նա դառնում է ռացիոնալացման բրիգադ, նա դառնում է, վերջապես, հանդիպական պլանավորման բրիգադ։

Ուրեմն՝ տնտհաշվարկային բրիգադի էությունն ու տնտեսական-քաղաքական նշանակությունը կայանում է նրանում, վոր նա հանդիսանում է աշխատանքի սոցիալիստական կազմակերպման բարձրագույն ձևը, հիմնված սոցմրցման, հարվածայնության և հանդիպական պլանավորման վրա, հանդիսանում է իրոք մասսայական մի դպրոց աշխատանքի կազմակերպման և արտադրության կառավարման համար։

## Զ. ԻՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲՐԻԳԱԴԻՆ ՏՆՏՀԱՇՎԱՐԿԻ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Բրիգադի տնտհաշվարկը պահանջում է մանրակրկիտ նախապատրաստական աշխատանք կատարել ինչպես հասարակական, այնպես էլ տնտեսական գծով։

Բրիգադը տնտհաշվարկի անցկացնելը պետք է անպայման կատարվի կամավորության հիմունքով և միայն բանվորների համաձայնությամբ։ Ուստի անհրաժեշտ է ամենից առաջ ձեռնար-

կությունում մասսայական բացատրական աշխատանք կատարել տնտհաշվարկի էության և նրա այն առանձնահատկությունների մասին, վոր ունի նա տվյալ ձեռնարկությունում, տվյալ ցեխում, աշխատանքի տվյալ բնագավառում։

Բացի բանվորական ժողովներում զեկուցումներ դնելուց, այստեղ օգնության պետք է գան նաև պատի ու բազմատիրաժ թերթերը։ Ցուցադրել աշխատանքի փորձը, տնտհաշվարկային բրիգադների կազմակերպման արագ ու լավագույն նախապատրաստության համար միջոցներ հրավիրել, քննադատության կրակի տակ առնել նրանց, ովքեր ամեն տեսակ «բարեմիտ» պատրվակներով փորձում են խոչընդոտ հանդիսանալ տնտհաշվարկային բրիգադների մասսայական կազմակերպմանը — ահա այն կոնկրետ օգնությունը, վոր պետք է ցույց տան պրոֆմիության ակտիվիստները և տեղական մամուլի բանվորթղթակիցները։

Այս մասսայական նախապատրաստական աշխատանքից հետո, հարկավոր է լուծել բրիգադները տնտհաշվարկի անցկացնելու մի շարք կազմակերպչական հարցեր։

Ամենից առաջ հարկավոր է նշել, վոր տնտհաշվարկային բրիգադները կազմակերպվում են արտադրական բրիգադների հիման վրա։ Աշխատանքի պարզորեն վորոշված արտադրական բնագավառ և հիմնական բանվորական կորիզ բրիգադում — ահա թե ինչն է ամենից առաջ անհրաժեշտ, որպես տնտհաշվարկային բրիգադի կազմակերպման պարտադիր պայման։ Այստեղ հարկավոր է նկատի ունենալ, վոր ներկայումս դեռևս վոչ միշտ հնարավոր է լինում վորոշել «աշխատանքի արտադրական բնագավառ» ֆաբրիկաներում, մանավանդ առաջին շրջանում, հաճախ այդ խնդրում վորոշ դժվարություններ կհանդիպեն. սակայն այդ չպետք է կասեցնի տնտհաշվարկային բրիգադների կազմակերպման գործը։

Տնտհաշվարկային բրիգադներ կազմակերպելիս՝ գոյություն ունեցող հարվածային բրիգադները հիմնականում պետք է պահպանվեն։ Սակայն թույլատրվում է նրանց կազմում կատարել այս կամ այն վերախմբավորումները, վորոնք համապատասխանելիս լինեն արտադրական պրոցեսի պայմաններին։ Օրինակ. 10 հոգուց բաղկացած տվյալ արտադրական բրիգադում կա 8 հոգուց բաղկացած մի հարվածային բրիգադ, վորը և վորոշում է անցնել տնտհաշվարկի։ Այս դեպքում նրանք հավանաբար իրենց կազմի մեջ պետք է մտցնեն նաև մյուս ընկերներին, վոչ հարվածայիններ-



րին։ Կամ ուրիշ օրինակ. յեթե մի արտադրական խմբում մինչ տնտհաշվարկի անցնելը գոյություն ունեն յերկու ինքնուրույն հարվածային բրիգադներ, նրանք պետք է միանալով կազմեն մեկ տնտհաշվարկային բրիգադ։

Այնուամենայնիվ հարկավոր է ընդգծել, վոր տնտհաշվարկային բրիգադները չպետք է անպայման կազմակերպվեն հարվածային բրիգադներից։ Հարցն այդպես դնելիս՝ մենք կնեղացնենք շարժման թափը։ Տնտհաշվարկային բրիգադը բանվորներ ցանկությամբ ստեղծվում է ամեն մի արտադրական բրիգադից՝ անկախ այն բանից, հարվածային է նա, թե վոչ հարվածային։

Տնտհաշվարկային բրիգադներ կազմակերպելու հետ միաժամանակ անհրաժեշտ է առանձնացնել բրիգադի յեռանկյունին, ցեխվարչության համար նշանակել մի բրիգադիր, իսկ բրիգադի համար ընտրել պրոֆխմբկազմակերպիչ։ Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր բրիգադիրի համար թեկնածու կարող է առաջադրվել բրիգադի կողմից։ Ցեխվարչությունն իրավունք ունի ընդունել կամ մերժել առաջադրված թեկնածվին։

Հարկավո՞ր է արդյոք մի քանի հարվածային բրիգադ միացնելով կազմել մեկ տնտհաշվարկային բրիգադ այն դեպքում, յերբ նրանք չափազանց սերտ կերպով կապված են միմյանց հետ ըստ արտադրության պայմանների, օրինակ՝ կոնվեյերի վրա, այս կամ այն բարդ ագրեգատի վրա աշխատող հարվածային բրիգադները։ Թույլատրելի՞ յե արդյոք նման «խոշորացում»։

Ամբողջ վճռականությամբ պետք է ասել, վոր բոլոր այն դեպքերում, յերբ հարվածային բրիգադների այսպիսի միացումը դուրս է գալիս մեկ արտադրական օղակի սահմաններից, վորպես նախատեսված է ՀԱՄԿԽ-ի կանոնադրությամբ *) հարվածային բրիգադների այդպիսի մեխանիկական միացումը մեկ տնտհաշվարկային բրիգադում անպայման անթույլատրելի յե։ Տնտհաշվարկային բրիգադների նկատմամբ այսպիսի տեխնիկ-բյուրոկրատական մոտեցումն արդարացնելու համար առաջադրվող տեխնիկական պատճառաբանությունները (հաշվառման, կառավարման, հսկողության և այլ հարմարություններ) անհիմն են այն պարզ պատճառով, վոր նրանք ի չիք են դարձնում տնտհաշվարկային բրիգադի յուրաքանչյուր առանձին բանվորի անձնական մասնակցությունն ու ճանաչությունը։ «Խոշորացված» տնտհաշվարկային

*) Տես «Տրուդ» թերթի 1931 թ. հունիսի 28-ի 176-րդ համարը։

բրիգադն ինքնին սկիզբ է հանդիսանում աշխատանքի կազմակերպման դիմազրկության։ Ահա թե ինչու հարկավոր է անխուսափելի համարել գոյություն ունեցող հարվածային բրիգադների վերացումը «խոշորացված» տնտհաշվարկային բրիգադներ կազմակերպելու նպատակով։

Տնտհաշվարկի անցնելու ցանկություն ունեցող բրիգադների հայտարարման հետ միասին, ցեխային վարչությունը պետք է վաղօրոք նախապատրաստի բոլոր անհրաժեշտ հաշիվներն ու ցուցանիշները, որոշի բրիգադին տրվելիք արտադրական առաջադրությունը, ինչպես նաև սարքաբաժանի արտադրական ծախսերի նախահաշիվները։ Այս նյութերի հիման վրա բրիգադը, նրան կցված պլանավիկ-տնտեսագետի կամ ճարտարագետ-տեխնիկական աշխատավորի օժանդակությամբ կարող է անցնել որոշելու իր սարքավորման արտադրողականությունը, հաշվելու նշված արտադրական ծրագրի կատարման համար անհրաժեշտ նյութեղենի քանակը, աշխատավարձի, նորոգման, գործիքների և այլ ծախքերը, նրա գոյություն ունեցող նորմաների հիման վրա։

Ներքին քննման ատյանում,—բրիգադի արտադրական խորհրդակցությունում քննարկել ցեխվարչության մշակած առաջադրությունները ու ցուցանիշները, մշակել հանդիպական նորմաները, վերջնականապես սահմանել բրիգադի արդֆինպլանը, ցեխային վարչության հետ մշակել հանդիպական պլանը, մշակել և ձևակերպել պայմանագիրը։

Այդպիսին է բրիգադը տնտհաշվարկի անցկացնելու նախապատրաստման ուղին։ Նա այնքան էլ պարզ չի, որպեսզի հնարավոր լինի անցնել «հեծելազորային արշավի» կարգով։ Բայց և նա այնքան էլ բարդ չէ, որպեսզի պահանջվի երկար ժամանակ վատնել։ Տարակույս չկա, որ տնտհաշվարկային բրիգադի յուրաքանչյուր մասնակցողից կպահանջվի բավական մեծ աշխատանք, ինչքան կարելի յե կարճ ժամանակում և հանգամանորեն յուրացնելու համար պայմանագրի բոլոր պայմանները։ Այդ խնդրում օժանդակություն ցույց տալը ինչպես ցեխային ու գործարանային պրոֆկազմակերպության, այնպես էլ ցեխային ու համագործարանային վարչության և առաջին հերթին տեղական ճարտարագետ-տեխնիկների սեկցիայի ու հաշվառման աշխատակիցների միավորման մեջ մտնող մասնագետների ակտիվի ուղղակի պարտականությունն է հանդիսանում։ Դրան զուգընթաց, բացառիկ մեծ օգնություն կարող են ցույց տալ արդեն գոյություն ունեցող



1007
33906

բրիգադները, կամ ծանոթացնելով իրենց աշխատանքի փորձի հետ և կամ թե ուղղակի օժանդակություն ցույց տալով, մանավանդ բրիգադի պայմանագրի մշակման խնդրում։

Ուրեմն, բրիգադը տնտհաշվարկի անցկացնելու համար անհրաժեշտ է այդպիսին կազմակերպել հիմք ունենալով արտադրական բրիգադը, ձևակերպել տնտհաշվարկային բրիգադի պրոֆմիութենական, կուսակցական և վարչական ղեկավարությունը, վաղօրոք մշակել բրիգադի արդֆինպլանը ցեխվարչության միջոցով, այն քննության առնել բրիգադում, ցեխվարչության հետ միասին հանդիպական պլան մշակել, քննարկել և ձևակերպել պայմանագիրը։

## 3. ԻՆՉՊԻՍԻՆ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՏՆՏՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԲՐԻԳԱԴԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Պայմանագիրն ամենից առաջ պետք է ինչքան կարելի յե ձևով պարզ ու հասկանալի լինի ոչ միայն բրիգադիրի, այլ և տնտհաշվարկային բրիգադի յուրաքանչյուր մասնակցողի և ամեն մի շարքային բանվորի համար։ Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր բանվոր ամենակարճ ժամանակում տնտհաշվարկային բրիգադի մասնակից է դառնալու։ Ուստի ինչքան պարզ ու հասկանալի լինի կազմված բրիգադի պայմանագիրը, այնքան ավելի հիմունքներ կլինեն աշխատանքի ու արտադրության այդ վճռական օղակի հաջող գործունեության համար։

Պայմանագիրը պետք է լինի ճշտված և ինչքան կարելի յե կարճ։ Վերջապես տնտհաշվարկային բրիգադի պայմանագիրը պետք է լինի միանգամայն կոնկրետ։ Այնտեղ պետք է մասնանշված լինի որոշակի աշխատանքն իր կատարման ժամկետներով, թվարկված լինեն կատարման որոշակի պայմաններն ու կարգը։ Պայմանագրի կնքման ժամկետը, հատկապես առաջին շրջանում, պետք է լինի մի ամիս։

Համաձայն ԺՏԳԽ-ի և ՀԱՄԿԽ-ի 1931 թ. սեպտեմբերի 11-ի որոշման, տնտհաշվարկային բրիգադի պայմանագիրը կազմվում է հիմք ունենալով այն արտադրական առաջադրությունը, որը տնտհաշվարկային բրիգադն ստանում է ցեխի պետից։ Բրիգադին տրվող այդ առաջադրության մեջ ներկայացվում են քանակական ու որակական ցուցանիշները, աշխատանքի արտադրողականության նորմաները, խոտանի նորմաները և բրիգադից կախված

ծախքերի նորմաները՝ թե դրամական և թե նատուրալ արտահայտությամբ։

Վարպետը արտադրական առաջադրությունն ըստ ամենայնի մատչելի լինի տնտեսհաշվարկային բրիգադի մասնակիցների համար, անհրաժեշտ է հնարավորության չափով այդ առաջադրությունը հասցնել մինչև բանվորը, արտադրական առաջադրությունը կազմելով գագդյանների, մեքենաների ու առանձին բանվորների համար։ Արտադրական պլան կազմելու այդպիսի կարգը կոնկրետացնում է յուրաքանչյուր առանձին բանվորին տրվող առաջադրությունը և բրիգադի համար հեշտացնում է հանդիպական պլան կազմելու գործը։

Տնտեսհաշվարկային բրիգադի պայմանագիրը ցեխային վարչության ու բրիգադի երկու կողմի պարտավորագիր է հանդիսանում և պետք է հնարավորության չափով իր մեջ պարունակի հետևյալ հիմնական կետերը.

## Ա. ԲՐԻԳԱԴԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՒՄ

1. Ստացված առաջադրության և սեփական հանդիպական պլանի համաձայն վորոշ արտադրական առաջադրություն կատարելու պարտավորություն, թվարկելով թե ինչ, ինչպիսի քանակությամբ և ինչ գումարով բրիգադը ծրագրում է գերակատարել տրված առաջադրանքը։

2. Տեխնիկական պահանջների ու վորակական ցուցանիշների համաձայն արտադրական առաջադրություն կատարելու պարտավորություն, մասնավորապես չգերազանցելով խոտանի համար սահմանված նորմաները (խոտանի տոկոսն ու նրա արժեքը) և խոտանը կրճատելու կամ բոլորովին վերացնելու հանդիպական պլան առաջադրելով։

3. Բրիգադի հանդիպական պարտավորությունները հիմնական և օժանդակ նյութերի ծախսերի (անունը, քանակությունը, գինը և արժեքը) և աշխատանքի արտադրողականության բարձրացման խնդրում (արտադրանքի անունները, արտադրանքի միավորի վրա գործադրվող ժամանակի ծախսման նորմաները, բանվորական ժամերի կամ օրերի ընդհանուր քանակությունը), աշխատանքը սակավաթիվ բանվորներով կատարելը, խոտանի վերացումը կամ նրա նվազումը վորոշ տոկոսով. նորոգման ու գործիքների ծախսերի կրճատումը (անունները, մաշվելու ժամկետները, գինը և արժեքը) և այլն։



4. Ինվենտարի (դազգյահ, գործիք) նկատմամբ խնամքոտ վերաբերմունք ունենալու պարտավորություն, ինվենտարն ամրացնելով բրիգադի մասնակիցներին։

5. Բրիգադից նշանակել մի հոգի, վորը պետք է ստանա սարքավորումն ու ինվենտարը և հանձնի հաջորդ հերթափոխությանը, ցեխվարչությանն անմիջապես իմաց տա սարքավորման ու ինվենտարի կոտրված կամ մաշված լինելու մասին։

6. Հավաքել և հանձնել արտադրության մնացած ավելցուկները։

7. Վոչ հարգելի գործալքումների վերացման պարտավորություն։

8. Թվարկել այն կոնկրետ ռացիոնալիզատորական միջոցառումները, վոր կառաջարկի բրիգադը արտադրանքն ավելացնելու, նրա վորակը լավացնելու և ինքնարժեքն իջեցնելու ուղղությամբ։

Միաժամանակ ավելորդ է մինչև բրիգադը հասցնել համացեխային ու համագործարանային այն վերադիր ծախսերը, վորոնք անմիջական կախում չունեն բրիգադի աշխատանքից, ինչպես օրինակ՝ շենքը մաքրելու, ցեխային տրանսպորտի, տաքության, լուսավորության, ցեխի վարչության ռոճիկ և այլ ծախսերը։ Հարկ վոր է հանձն առնել միմիայն այն ծախսերի պարտավորությունը, վորոնք կատարվում են բրիգադում և վորը բրիգադը կարող է իր վերահսկողության տակ վերցնել ու կրճատել։

## Բ. ՑԵԽԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՒՄ

1. Ժամանակին մատակարարել (աշխատանքի վայրը հասցնել) հումքը, նյութերը, կիսաֆաբրիկատը և գործիքները, մատնանշելով մատակարարման ժամկետները, կարգը, պարտիաների քանակը և այլն։

2 Ժամանակին հասցնել բրիգադին ընթացիկ ամսվա առաջադրությունները, մատնանշելով մշակման համար տրվող նյութերի քանակը, գինը և արժեքը, մի բանվորի մեկ ժամվա կամ օրվա արտադրանքի նորմաները, խոտանի նորմալ տոկոսը, արտադրանքի հանձնման ժամկետներն ու կարգը, հումքի և օժանդակ նյութերի ծախսման նորմաները։

3 Վերացնել բրիգադի աշխատանքից կախում չունեցող և խոտան առաջացնող տեխնիկական պատճառները։

4. Ճիշտ հաշվառման յենթարկել գործիքները, մեքենաները (շոգեմեքենաներ, ավտոմեքենաներ և այլն) և մարդկանց պարապուրդները, ցույց տալով վերջինների պատճառները։

5. Ճիշտ վորոշված ժամկետներին հաշվառման յենթարկել բրիգադի աշխատանքը, յերևան հանել աշխատանքի արդյունքները և նրանց մասին իրազեկ դարձնել բրիգադին։

6. Տեխնիկական կոնսուլտացիա ու հրահանգավորում կազմակերպել բրիգադի համար և օգնելու նպատակով նրան ամրացնել վորոշ ճարտարապետ—տեխնիկական ու հաշվային աշխատողներ։

7. Պարգևատրման համար վորոշ տոկոս հատկացնել այն գումարներից, վորոնք ստացվում են հումքի, օժանդակ նյութերի, վառելանյութի, բանուժի և այլ տնտեսումներից, ինչպես նաև ամսական պարգևատրման կարգ սահմանել վորոշակի ժամկետներով, հաշվառման յենթարկելով տնտհաշվարկային բրիգադի յուրաքանչյուր անդամի աշխատանքը։

Այդպիսին է մոտավորապես պայմանագրի բովանդակությունը *)։ Թվարկված կետերը հիմնականներն են։

Համաձայն արտադրության առանձնահատկությունների և առաջին հերթին յերկաթուղային, ջրային ու տեղական տրանսպորտում, քարածխի արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ (շոգեմեքենա, ավտոմեքենա, հանքահոր, տրակտոր և այլն) տնտհաշվարկային բրիգադի պայմանագրի այս կետերը կարող են անշուշտ փոփոխման յենթարկվել իրենց մանրամասնությունների մեջ, բայց նրանց հիմնական բովանդակությունը պետք է պահպանվի։

Պարտադիր է արդյոք պայմանագրի մեջ մտցնել բրիգադի հանդիպական պլանը։ Ցեխ վոր պլանի համար է բրիգադը պատասխանատու վարչության առաջ իր հանձն առած պարտավորություններով։ Այսպիսի հարցեր պրակտիկայում հաճախ են ծագում։

Հանդիպական պլանը բրիգադի նախաձեռնությունն է։ Հանդիպական պլան կարող է առաջադրվել տնտհաշվարկային բրիգադի պայմանագրի կամ բոլոր ցուցանիշների, կամ նրանց մեկ մասի համար։ Մենք արդեն ասացինք, վոր տնտհաշվարկի

*) Տես հավելվածում տնտհաշվարկային բրիգադի տիպական կանոնադրությունը։



կարող է անցնել ամեն մի արտադրական բրիգադ, թեկուզ և նա հարվածային չլինի և սոցմրցման պայմանագիր կնքած չունենա։

Այդտեղից էլ բխում են բրիգադի համապատասխան պարտավորությունները։ Տնտհաշվարկային բրիգադը ցեխային վարչության առաջ պատասխանատու յե միմիայն նրա համար պարտադիր այն նորմաների ու պահանջների սահմաններում, վորոնք բխում են ցեխում գոյություն ունեցող արդֆինպլանից և գործող կանոններից (արտադրանքի նորմաներ, խոտանի նորմաներ, նյութերի ծախսման, գործիքների և այլ նորմաներ)։ Հանդիպական պլանի համար տնտհաշվարկային բրիգադը պատասխանատու յե բանվորական հասարակայնության առաջ, վորի նկատմամբ բրիգադի առաջադրած հանդիպական նորմաները ու արտադրական առաջադրությունը սոցմրցման ու հարվածայնության տիպիկ պարտավորություն են հանդիսանում։

Տնտհաշվարկային բրիգադների պայմանագրերի կնքումը հաստատուն բազա յե ստեղծում սոցմրցման ու հարվածայնության ավելի բարձր աստիճանի փոխադրման գործում։ Անկախ բրիգադի այն հանդիպական պարտավորություններից, վորոնք մտցվում են պայմանագրի մեջ, ստեղծվում են այնպիսի պայմաններ, վորով հնարավոր ու անհրաժեշտ է կնքել սոցմրցման պայմանագրեր, ինչպես անհատական՝ բրիգադի ներսում, այնպես էլ կոլեկտիվ՝ զանազան բրիգադների միջև թե տվյալ գործարանում և թե նրանից դուրս։

Ո՞ւմ միջև յեվ ինչ կարգով է կնքվում տնտհաշվարկային բրիգադի պայմանագիրը։ Մոսկվայի պրոֆխորհրդի վորոշման մեջ այդ մասին հետևյալն է ասում — «Տնտհաշվարկային բրիգադի պայմանագիրը կնքվում ու ստորագրվում է ցեխի վարչության հետ (ցեխի պետ, ցեխի վարպետ, ցեխի վարիչ) կամ ամբողջ բրիգադի կամ տվյալ բրիգադի լիազորած բրիգադիրի միջոցով։ Թե մեկ և թե մյուս դեպքում ցեխվարչության նշանակած բրիգադիրը լիովին պատասխանատու յե նրա առաջ այն առաջադրությունների ու նորմաների համար, վոր տրված են բրիգադին՝ յելնելով ցեխում գոյություն ունեցող արդֆինպլանից և այն կանոններից, վորոնք նախատեսված են օրենքով, կոլպայմանագրով և ներքին կարգապահության կանոնադրությամբ»։

Այսպես, ուրեմն, տնտհաշվարկային բրիգադի պայմանագիրը պետք է լինի պարզ, հասկանալի, ճշտված, կարճ ու կոնկրետ։ Իրենից ներկայացնելով ցեխվարչության և բրիգադի յերկ-

կողմանի պարտավորագիր, պայմանագիրն իր մեջ պետք է պարունակի մի շարք կոնկրետ պարտավորություններ ինչպես բրիգադի, այնպես էլ ցեխվարչության կողմից։ Տնտհաշվարկային բրիգադի պայմանագրին զուգընթաց անհրաժեշտ է կնքել նաև սոցմրցման լրացուցիչ պայմանագրեր ինչպես տվյալ բրիգադի ներսում, այնպես էլ նրա և այլ բրիգադների միջև։ Տնտհաշվարկային բրիգադի պայմանագիրը ստորագրվում է ցեխային վարչության հետ կամ ամբողջ բրիգադի, կամ նրա լիազորած բրիգադիրի միջոցով։

Տնտհաշվարկային բրիգադի պայմանագիրն ուժի մեջ է մեկ ամիս։

## 4. ՆՅՈՒԹԱԿԱՆ ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲՐԻԳԱԴՈՒՄ

Տնտհաշվարկի անցած բրիգադներում առաջին հերթին անհրաժեշտ է վերացնել դիմազրկությունն ու հավասարեցումը և աշխատանքի արդյունքների համար նյութական շահագրգռվածություն ստեղծել։ Այդպիսի նյութական շահագրգռվածություն կարելի է ստեղծել մեկ կողմից՝ աշխատանքի վարձատրության պրոգրեսիվ գործավարձային սիստեմ մտցնելով, իսկ մյուս կողմից՝ հումքի, նյութերի և այլ ծախսումների գումարից պարգևատրում կազմակերպելով։

Ծախսերի տնտեսումը պետք է հաշվել վարչության տված (պլանային) ինքնարժեքի համեմատությամբ, ըստ բոլոր այն ծախսերի, որոնք կախված են բրիգադից և այդպիսով ներկայանում է այն տարբերությունը, որ կա բրիգադի ծախսերի նախահաշվի առանձին մասերի ծրագրված (պլանային) ու փաստական գումարների միջև (հումքի ու կիսաֆաբրիկատի ծախսեր, օժանդակ նյութերի, գործիքների և նորոգման ծախսեր և այլն)։

Բայց բրիգադի տնտեսման տակ է դրվում ոչ թե այս ամբողջ տարբերությունը, այլ միայն որոշ տոկոսը, որը պետք է նախապես որոշել յուրաքանչյուր տնտհաշվարկային բրիգադի պայմանագրում։ Այս հատկացման տոկոսը աշխատանքի զանազան ընագավառներում միանման չէ. նա կախված է շատ պատճառներից (օրինակ՝ այն նյութերի արժեքից, որոնց հետ գործ ունի բրիգադը, նրանց ծախսման համար սահմանված հնարավորություններից) և կարող է տատանվել կատարվելիք տնտեսման 20-ից մինչև 60 տոկոսի սահմաններում։



Գործնականորեն հատկացումների չափը սահմանվում է հետևյալ կերպ. հաշվում են մոտավորապես, թե առավելագույնը չափով ինչպիսի գումարի տնտեսում կարող է տալ տվյալ բրիգադը նյութեղենից, հումքից ու կիսաֆաբրիկատից, օժանդակ նյութերից, գործիքներից և այլն, պայմանով, որ ամենաուշադիր վերաբերմունք ցույց տրվի նրանց ծախսմանը։ Բրիգադի ծախսերի առանձին հոդվածներից սպասվելիք տնտեսումները գումարում են, ապա հաշվում, թե միջին հաշվով ինչ գումար է ընկնում բրիգադի յուրաքանչյուր անդամին։ Եթե օրինակի կերպով յուրաքանչյուր բանվորի ընկնում է խոշոր չափով տնտեսում, հատկացման տոկոսը ցածր է վերցվում և ընդհակառակը։ Այս դժվարությունները սովորաբար առաջին անգամն են միայն հանդես գալիս։ Հետագայում, առաջին ամսվա աշխատանքի փորձի վրա հիմնվելով, բրիգադին հատկացվելիք տնտեսման տոկոսի որոշման հարցը մեծ դժվարություն չի ներկայացնի։

Պարգևները պետք է բաժանվեն բրիգադի անդամների բրիգադի որոշմամբ։ Այդ հնարավորություն է տալիս լավագույն ձևով պարզելու, թե ինչպիսի՞ դեր է խաղացել բրիգադի յուրաքանչյուր մասնակից ամբողջ բրիգադի տված տնտեսման գործում։ Յուրաքանչյուր անդամի աշխատանքն ամենից ավելի ճիշտ կերպով գնահատել կարող է անշուշտ ինքը բրիգադը, նա կարող է և պետք է խուսափի հավասարեցման վնասակար սխալներից, անհատապես պարգևատրելով յուրաքանչյուրին ըստ նրա կատարած աշխատանքի։

Պարգևների բաժանումը պետք է կատարել ամեն ամիս։ Ինչի համար է այդ հարկավոր։ Նրա համար, որ տնտհաշվարկային բրիգադի յուրաքանչյուր բանվոր տեսնի, որ ինքնարժեքի իջեցման, որակի լավացման համար իր թափած ջանքերն անմիջապես անդրադառնում են իր բյուջեի վրա։ Տնտհաշվարկային բրիգադի յուրաքանչյուր անդամի այս նյութական շահագրգռվածությունը հնարավորություն է տալիս էլ ավելի մեծ հաջողություններ ձեռք բերել պլանների կատարման, ինքնարժեքի իջեցման, որակի լավացման (որը նույնպես իջեցնում է ինքնարժեքը) համար մղվող պայքարում և այդ պայքարը դարձնում է ամբողջ բանվորական մասսայի, ներառյալ նաև յուրաքանչյուր բանվորի գործը։

Ահա թե ինչու հիմնովին սխալ են այն «տնտեսավարները», որոնք չեն հասկանում, որ ինքնարժեքի գերպլանային իջեցու-

րը տնտհաշվարկային բրիգադում կուտակման լրացուցիչ աղբյուր է հանդիսանում, և որոնք պատրվակ բերելով այն, թե այդ առթիվ չկա տնտեսական վերադաս կազմակերպությունների «համապատասխան կարգադրությունը», հրաժարվում են տնտհաշվարկային բրիգադներին պարգև տալ, կամ առաջարկում են այդ նպատակի համար օգտագործել սոցմրցման և հարվածայնության պարգևատրման ֆոնդերը:

Ձեռք բերված տնտեսման գումարներից ամենամյա պարգևատրում կատարելը չի խանգարում պարբերաբար պարգևատրել առանձին հարվածային բրիգադներին և առանձին հարվածայիններին սոցմրցման ու հարվածայնության կազմակերպման լավագույն նվաճումներ ունենալու համար: Խոսքը պրոլետարական պետության համար սոցիալիստական կուտակման լրացուցիչ աղբյուրներ փնտրելու գործը խրախուսելու մասին է, և այդ գործի նկատմամբ նեղ-գործամոլական, ձևական մոտեցում ունենալը վնասակար է: ԽՍՀՄ ԺՏԳԽ-ի և ՀԱՄԿԽ-ի 1931 թ. սեպտեմբերի 11-ի որոշումը դրան վերջ է տալիս, և ներկայումս պետք է աշխատել, որ տնտհաշվարկային բրիգադների պարգևատրումը ծախքերի գերպլանային կրճատման համար կատարվի անընդհատ:

Տնտեսումը ո՞ր նորմաների համեմատությամբ պետք է հաշվել: Վարչության նորմաների թե՞ տնտհաշվարկային բրիգադի հանդիպական նորմաների համեմատությամբ: Ոմանք տեղ տեղ փորձ արին տնտհաշվարկային բրիգադներին տալու նրանց ուժերից բարձր առաջադրություններ, այդպիսով նրանց զրկելով հասանելիք պարգևից: Դա հիմնովին հակասում է բանվորների նյութական շահագրգռվածության սկզբունքներին և կարող է միմիայն վարկաբեկել տնտհաշվարկի արմատացումը ձեռնարկություններում:

Տվյալ ձեռնարկությունում գոյություն ունեցող ծախքերի նորմաներն ու պլանային ինքնարժեքը և հաստատված արդֆինպլանի ու հավաքական պայմանագրի միջոցով կարգավորվող աշխատանքի գործող նորմաները այն հիմունքներն են, որոնցից պետք է ելնել տնտհաշվարկային բրիգադների նվաճումները հաշվի առնելիս և պարգևատրման չափը սահմանելիս: Տնտհաշվարկային բրիգադի հանդիպական նորմաներն ու ցուցանիշները հանդիսանում են այն պլանային նշումը և գործարանային հասարակայնության առաջ վերցրած այն պարտավորությունը, որ իրեն առաջադրում է տնտհաշվարկային բրիգադը, իր համար սահմա-



նելով այն մոտալուտ նպատակը, որի համար նա կազմակերպվել է և որի համար պայքարում է տնտեսական ֆրոնտի իր հատվածում:

Տեղ-տեղ փորձեր են անում տնտհաշվարկային բրիգադի կազմակերպման առնչությամբ աշխատավարձը մեկ ընդհանուր գրքույկով և կոլեկտիվ կարգով տալու կարգ սահմանել: Աշխատանքի վարձատրման ու պարգևատրման այդ կարգը ոչ մի դեպքում թույլատրելի չէ: Նա կհանգի վնասակար դիմազրկության և հավասարեցման: Անհրաժեշտ է լրիվ չափով պահպանել յուրաքանչյուր առանձին բանվորի արտադրական դեմքն և ոչ մի չափով չդի ազրկել զանազան որակավորման տեր բանվորների աշխատանքի վարձատրման գոյություն ունեցող սիստեմը:

Աշխատավարձի բնագավառում հիմնական խնդիրը ներկայումս միանգամայն պարզ է—«Հարկավոր է վերացնել հավասարեցումը և փշրել հին տարիֆային սիստեմը... Հարկավոր է կազմակերպել տարիֆների այնպիսի սիստեմ, որը հաշվի առնի այն տարբերությունը, որ կա որակավոր աշխատանքի ու ոչ որակավոր աշխատանքի միջև, ծանր աշխատանքի ու թեթև աշխատանքի միջև» (Տնտեսավարների խորհրդակցությունում ընկ. Ստալինի արտասանած ճառից):

Սրանից ելնելով, տնտհաշվարկային բրիգադները ներկայումս պետք է դառնան աշխատանքի վարձատրման սիստեմի վերակառուցման առաջամարտիկներ, իրենց վրա պետք է վերցնեն ամեն կերպ գործավարձ կիրառելու և աշխատանքի վարձատրման պրեմիալ—պրոգրեսիվ գործարքային սիստեմ արմատացնելու նախաձեռնությունը: Պրակտիկան ցույց է տալիս, որ այստեղ ևս մենք ունենք ինքնարժեքի իջեցման լրացուցիչ մի աղբյուր (ի հաշիվ վերադիր ծախքերի կրճատման, որոնք բեռան պես ընկած են աշխատավարձի վրա) և աշխատանքի արտադրողականության, հետևաբար սոցիալիստական շինարարության տեմպերի աճման մի նոր աղբյուր:

Բրիգադի պայմանագրում արդեն իսկ սահմանվում է այնպիսի մի կարգ, որ բոլոր դեպքերում, որտեղ այդ հնարավոր է, տնտհաշվարկային բրիգադը վերացնում է ժամանակավարձը և անցնում է գործավարձի ու պրեմիալ պրոգրեսիվ գործարքային սիստեմի: Այդ առանձնապես անհրաժեշտ է այն տնտհաշվարկային բրիգադներում, որտեղ նյութեղենի ծախսերի տնտեսումը չի կարող տալ որոշ չափով զգալի մի գումար, ուրեմն՝ մեքե-

նոլոգիական ցեխերի հավաքման աշխատանքներում, կոլտնտեսության կոնվեյերի աշխատանքներում և այլն։ Այդպես էլ տնտեսհաշվարկային բրիգադներում անհրաժեշտ է առաջին հերթին կիրառել պրեմիալ, պրոգրեսիվ գործավարձային սիստեմը, վորը բրիգադների անդամների մոտ աշխատանքի արդյունքների համար նյութական շահագրգռվածություն կստեղծի։

Այսպիսով՝ ծախսերի տնտեսման համար պարգևատրելը և պրոգրեսիվ գործարքային սիստեմի կիրառման հետևանքով աշխատավարձի բարձրացումը փոխադարձաբար լրացնում են միմյանց։ Պրեմիալ—պրոգրեսիվ գործարքայինի համար ֆոնդ է հանդիսանում վերադիր ծախսերի ծրագրված կրճատումը. բարձրանում է աշխատանքի արտադրողականությունը, համագործարանային ու ցեխային ծախսերի փոքր մասն է ընկնում արտադրանքի յուրաքանչյուր միավորին։ Ինքնարժեքի իջեցման համար տնտեսհաշվարկային բրիգադին պարգևատրելու ֆոնդ է հանդիսանում հումքի ու կիսաֆաբրիկատի, օժանդակ նյութերի, վերանորոգման, գործիքների և այդ կարգի այլ ուղղակի ծախսերի նվազումը։

Ինչպե՞ս պետք է բաշխվի պարգևը տնտեսհաշվարկային բրիգադում։ Վորպեսզի պարգևը դառնա վարձատրման իրոք խրախուսիչ մի ձև, անհրաժեշտ է, վոր նա վոչ մի դեպքում չդիմազրկվի բրիգադում։ Պարգևը պետք է բաշխել հաշվի առնելով բրիգադի յուրաքանչյուր առանձին անդամի աշխատանքի արդյունքները ու վորակավորումը։ Ահա թե ինչու պարգևի բաշխումը բրիգադի ներսում պետք է կատարվի բրիգադի վորոշմամբ, սակայն ցեխային վարչության և ցեխային կոմիտեի մասնակցությամբ։ Եվ ճիշտ, յեթե վոչ հենց իրեն՝ բրիգադին ամենից ավելի լավ ծանոթ կարող է լինել յուրաքանչյուր անդամի աշխատանքը։ Բայց այս յերբեք էլ չի նշանակում, վոր պարգևի բաշխման ամբողջ կարգը թողնվում է բրիգադի հայեցողությանը։ Ահա թե ինչու ցեխային վարչությունը և ցեխային կոմիտեն պետք է անպայման մասնակցեն տնտեսհաշվարկային բրիգադի պարգևի բաշխման գործին։

Լուսաբանության համար բերենք Զեմլյանսկայի անվան կաշեգործարանի տնտեսհաշվարկային բրիգադների պարգևների բաշխման կարգն ու արդյունքները։

Յուրաքանչյուր տնտեսհաշվարկային բրիգադ ստանում է գոյացած տնտեսման 25 %-ը։ Պարգևի բաշխումը բրիգադի ներսում կատարվում է բալլերի սիստեմով։ Դրա համար բրիգադի



անդամներին նախ խմբերի յեն բաժանում ըստ վորում 110 %-ից ավելի արտադրողականություն տվող բանվորները հաշվվում են առաջին կատեգորիայի, 105 %-ից ավելի՝ յերկրորդ կատեգորիա, 100 %-ից ավելի՝ յերրորդ կատեգորիա և 100 %-ից ցածր՝ չորրորդ կատեգորիա։ Վերջինս առանձին բրիգադներում բոլորովին չի պարգևատրվում։

Բրիգադը յուրաքանչյուր խմբի համար սահմանում է վորոշ քանակությամբ բալլեր։ Որինակ, առաջին խումբն ստանում է 5 բալլ, յերկրորդը՝ 4, յերրորդը՝ 3... Այնուհետև պարզվում է, թե յուրաքանչյուր խմբին քանի՞ բանվոր է ընկնում և ինչքան բալլ է հասնում այդ խմբին։ Յենթադրենք թե առաջին խմբում կա 2 հոգի (5-ական բալլ) յերկրորդում՝ յերեք հոգի (4-ական բալլ) և յերրորդում 6 հոգի (3-ական բալլ)։ Ամբողջ բրիգադի բալլերի ընդհանուր թիվը այսպիսով կազմում է 40 (10, 12 և 18)։ Ասենք թե յուրաքանչյուր բալլը հավասար է 3 ռուբլու և ընդամենը հարկավոր է բաժանել 120 ռուբլի։ Այդ դեպքում առաջին խումբը մտնող բանվորը կստանա 5 բալլի հաշվով 15 ռ., յերկրորդ խմբինը՝ 12 ռ., իսկ յերրորդը՝ 9 ռ.։

Միաժամանակ հաշվի յե առնվում բրիգադի յուրաքանչյուր անդամի վոչ միայն աշխատանքի արտադրողականությունը այլև մի շարք այլ հանգամանքներ, որինակ՝ խոտանը, գործալքումը և այլն։ Խոտանի և գործալքման համար բրիգադն այս կամ այն բանվորին փոխադրում է մեկ կամ յերկու աստիճան ցածր, ասենք թե առաջին խմբից յերկրորդ խումբը, յերկրորդից յերրորդը, կամ թե բոլորովին զրկում է պարգևից։

Պարգևների բաշխումը կատարվում է բրիգադային ժողովներում, ցեխային վարչության և ցեխային հասարակայնության ներկայացուցչի մասնակցությամբ։ Ի վերջո՝ բրիգադներից մեկում 2 հոգի մայիս-հունիս ամիսների համար ստացան 118-ական ռուբլի, իսկ 1 հոգի՝ 59 ռ., մյուս բրիգադում 4 հոգի ստացան 85-ական ռ. (ամսական աշխատավարձի մոտ 50-60 տոկոսը), յերկու հոգի՝ 50-ական ռ., յերկու հոգի՝ 40-ական ռ., մի հոգի 38 ռ. և մի հոգի 25 ռ.։ Յեղան և այնպիսի բրիգադներ, վորտեղ ստացան ընդամենը 5-ական կամ 3-ական ռ., իսկ մի բրիգադ բոլորովին զրկվեց պարգևից՝ 292 ռուբլի գերածախս արած լինելու համար։

Այսպիսին է Զեմլյանսկայի անվան գործարանում պարգևնե-

րի բաշխման կարգը, վորը կարելի յե հանձնարարել նաև մյուս տնտհաշվարկային բրիգադներին։

Դիֆերենցությունը պարգևների բաշխման գործում տնտեսավար այն բրիգադի իրական նյութական շահագրգռվածության կատաղի թշնամին է։ Բայց ավելի վատթար թշնամի յե պարգևների ուշացումը, վորպիսի օրինակներ քիչ չեն գործնականում։ Շատ տնտեսավարների մոտ նկատելի յե «ծայրաստիճան» զգուշավորություն, վորը կարող է վիժեցնել տնտհաշվարկային բրիգադների աշխատանքը։ Այլ կերպ չի կարելի անվանել պարգևների վճարման յերկու-յերեք ամսով ուշացումը։

Մեր ասածը լուսաբանելու համար բերենք Մոսկվայի արգելակներ շինող գործարանից մի օրինակ։ Այստեղ ընկ. Կվոլակու կոմյերիտական բրիգադը կազմակերպվել է մայիս ամսից։ Աշխատանքի հաշվառումը կատարում է ինքը բրիգադը։ Բրիգադը մայիս և հունիս ամիսների ընթացքում ցեխին տվեց 882 ռ. տնտեսում, վորը հաստատում է նաև ցեխի վարչությունը։ Աշխատանքի արտադրողականությունը մայիս ամսին կազմում եր 116, 3 %, հունիսին՝ 122%։ Խոտանը 0,42 %-ից իջեցվեց 0.18%-ի։ Յերկու ամսվա տնտեսումը խոտանի նվազման գծով կազմում է 190 ռ., գործիքների նկատմամբ հոգատար վերաբերմունքի գծով 362 ռ. 10 կ., դազգյահների սարքավորման գծով՝ 330 ռ.։ Աշխատանքի նկատմամբ ուշադիր վերաբերմունք ցուցաբերելը հնարավորություն տվեց զգալի չափով կրճատել գործիքների ու օժանդակ նյութերի քանակը։

Բայց յերրորդ ամսում բրիգադն իջեցրեց աշխատանքի տեմպերը։ Ցեխային վարչությունը հաշվառում չեր կատարում, ժամանակին չեր վերանորոգում դազգյահները։ Դազգյահներից մեկը ամբողջ 11 որ անգործության մատնվեց մեկ բոլտի կոտրվելու պատճառով, վորը շինելու համար պահանջվում եր 3—4 ժամ։ Բրիգադին բաց թողնվող նյութերի հաշվառում նույնպես չկար։

Բրիգադի օգոստոս ամսվա պայմանագրում ծախքերի տընտեսման 40%-ի չափով պարգև եր սահմանված։ Այսպիսով մայիս և հունիս ամիսների համար գործարանի վարչությունը բրիգադին պարտք եր 350 ռուբլի, վորը չեր վճարել մինչև օգոստոսի յերկրորդ կեսը։ Ներարդյունաբերական կուտակման համար պայքարողների հանդեպ ցուցաբերվող այսպիսի անուշադիր վերաբերմունքը պետք է ամենախիստ հականհարվածի արժանանա։

Ինչպես է լուծվում նյութական պատասխանատվության հար-



ցը բրիգադում։ Միանգամայն անվիճելի յե, վոր առանց Ժողկոմխորհի մարտի 20-ի վորոշմամբ սահմանված իսկական պատասխանատվության՝ տնտեսական հաշվարկ լինել չի կարող։ Կանոնագրությունն ասում է իսկական շահագրգռվածություն յեվ պատասխանատվություն ստեղծելու մասին։ Իսկ ինչպիսին է տնտհաշվարկային բրիգադում կիրառվող իսկական պատասխանատվությունը։

Վոչ մի չափով չի թույլատրվում աշխատավարձից դուրս գալ կամ աշխատավարձը պահել այն դեպքում, յերբ բրիգադը չի կատարում իր ստանձնած պարտավորությունները։ Տեղ-տեղ փորձեր յեղան տնտհաշվարկային բրիգադների պայմանագրերում մտցնելու այնպիսի կետեր, ըստ վորոնց բրիգադն իր աշխատավարձով եր պատասխանատու դարձվում արտադրական առաջադրության թերակատարման համար։ Դա միանգամայն անթույլատրելի և տնտհաշվարկի արմատացման համար վնասակար մի խեղաթյուրում է։

Իսկ ինչպես է արտահայտվում տնտհաշվարկային բրիգադի նյութական պատասխանատվությունը։ Բրիգադը և նրա յուրաքանչյուր անդամը պարտավոր են յենթարկվել կոլեկտիվ պայմանագրի պահանջներին, ներքին կարգապահության և աշխատանքային օրենսդրության կանոններին։ Տնտհաշվարկային բրիգադի և նրա յուրաքանչյուր անդամի համար, ինչպես և վոչ-տնտհաշվարկային բրիգադների բանվորության համար, պարտադիր են այն կանոնները, վորոնցով ձեռնարկությունում կարգավորվում են խոտանի, սարքավորման ու գործիքների նկատմամբ պատշաճ վերաբերմունքի և այլ հարցերը։ Այս ասպարեզում տնտհաշվարկային բրիգադի համար վորևէ հատուկ պատասխանատվություն չի սահմանվում, այլ կենսագործվում են գոյություն ունեցող աշխատանքային օրենսդրությունն ու կոլպայմանագրի պայմանները, վորոնք ամենուրեք վոչ լրիվ չափով են կատարվում։

Սակայն կա այնպիսի մի բնագավառ, վորը գրեթե յերբեք չի կարգավորվում գործող կոլպայմանագրի և աշխատանքային օրենսդրության կարգով։ Դա նյութեղենի, հումքի ու կիսաֆաբրիկատի ծախսման նորմաներն են, վորոնք վճռական նշանակություն ունեն տնտհաշվարկային բրիգադի արտադրական ծախքերի նախահաշվում։ Նշանակալից չափով բրիգադից է կախված այս մասի գերածախսը կամ տնտեսումը։ Պլանային ինքնարժեքի

դիմաց տնտեսում ասլու գծերում բրիգադները պարգևատրվում են։ Բնականաբար հարց է առաջանում նյութական պատասխանատվության մասին, վոր պետք է կրի տնտհաշվարկային բրիգադը սահմանված պլանային ինքնարժեքի դիմաց գերածախս կատարած լինելու համար, բայց վոչ ի հարկե, բանվորների աշխատավարձի հաշվին, այլ այն տնտեսման հաշվին, վոր ունեցել է բրիգադն անցյալ ամսում և կամ վորը պետք է ձեռք բերել հաջորդ ամսում այդ գերածախսը ծածկելու համար։

Մի քանի ձեռնարկություններում մի քանի բրիգադների հետազոտության պրակտիկան ցույց տվեց, վոր յեզակի դեպքերում միայն տնտհաշվարկային բրիգադներն անբավարար արդյունք են տալիս։ Բայց և այս գերածախսը նրանք անում են բացարձակ մեծամասնությամբ վոչ թե իրենց մեղքով, այլ ցեխային վարչությունից կախված պատճառներով։ Ահա թե ինչու Մոսկվայի պրոֆխորհրդի նախագահությունն իր վորոշման մեջ նշեց վոր պրոգրեսիվ գործավարձը յեվ պարգևատրումը բավականաչափ չլինելով են տալիս քանակական ու վորակական ցուցանիշների համար գործնականորեն պայքարելու։

«Աշխատավարձը տնտհաշվարկային բրիգադում (պրոգրեսիվ գործավարձ, պարգևատրում) աշխատանքի արդյունքների հետ ուղիղ կախման մեջ դնելով, պետք է վարկ տա քանակական ու վորակական ցուցանիշների համար մղվող գործնական պայքարին։

«Տնտհաշվարկային բրիգադը քանակական ու վորակական ցուցանիշների կատարման իրական հաշվառում ու վերահսկողություն կազմակերպելով, արտադրության թերությունները և նրանց կոնկրետ մեղավորներին յերևան հանելով, պետք է ապահովի որենքով և կոլպայմանագրով բրիգադի ու յուրաքանչյուր առանձին բանվորի համար սահմանված նյութական պատասխանատվության իրագործումը, այն է՝ խոտան արտադրանքի վրա գործադրված աշխատանքը չվարձատրելը, խոտան արտադրանքի վրա ծախսված նյութերի դիմաց բռնելը, սարքավորման, գործիքների ու նյութերի չհանձնման և փչացման դիմաց բռնելը» (Մոսկվայի պրոֆխորհրդի նախագահության 1931 թ. հունիսի 10-ի վորոշումից)։

Տնտհաշվարկային բրիգադների նկատմամբ վորևէ հատուկ, լրացուցիչ նյութական պատասխանատվություն նախանշել անհրաժեշտ չէ, վորովհետև նյութական շահագրգռվածությունը ընդ-



տնտեսման համար տրվող պարգևատրման ձևով և աշխատավարձի ավելացումը աշխատանքի պրոգրեսիվ-գործարքային վարձատրման հետևանքով, անդրադառնում են, ինչպես այդ ցույց է տվել պրակտիկան, տնտհաշվարկային բրիգադների աշխատանքի հաջողությունն ապահովող լավագույն խրախուսիչ մեթոդը։

## 5. ԳԼԽԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՅԵՎ ՀՈՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԲՐԻԳԱԴՈՒՄ

Բոլորն ընդունում են այն վճռական նշանակությունը, վոր ունի հաշվառումը տնտհաշվարկային բրիգադի աշխատանքում, բայց այդ ուղղությամբ շատ քիչ բան է արված։ Բավական է միայն նշել, վոր յերբ Մոսկվայի պրոֆխորհրդի արտադրության սեկտորն իր ժամանակին հետազոտեց Մոսկվայի 120 տնտհաշվարկային բրիգադների աշխատանքը մայիս ամսին, ապա պարզվեց, վոր նրանցից իսկապես տնտհաշվարկային կարելի յեր համարել միայն 20-ին։ Իսկ ինչ յեղան մյուս 100 բրիգադները։ Յեվ ընդհանրապես նրանք գոյություն ունեցել են՞ արդյոք։

Կասկած չկա, վոր այդ բրիգադները յեղել են։ Նրանցից շատերն արդյոն վորոշակի եֆեկտ ունեցին, որինակ՝ Ցենտրոսոյուզի հրուշակի գործարանում կազմակերպված 60 բրիգադները։ Արդֆինպլանը այս գործարանում հետևյալ կերպ կատարվեց — ապրիլին յեռամսյակում 93%-ով, մայիսին, 100%-ով, հունիսին՝ 106.8%-ով։ Պլանի այս կատարումն ու գերակատարումը ամբողջապես արդյունք էր 60 տնտհաշվարկային բրիգադների աշխատանքին։ Այդ կարծիքին են թե գործարանային վարչությունը և թե գործկոմը։ Այնուամենայնիվ, չնայած դրան, հետազոտությունը ցույց տվեց, վոր այս 60 բրիգադները (ինչպես և հետազոտվածների մեծ մասը) դեռևս չի կարելի իսկական տնտհաշվարկային բրիգադ համարել։ Ինչու։ Վորովհետև նրանք չունեյին արտադրական նախահաշիվ յեվ իրենց ծախսերի հաշվառում չեյին կատարում։

Նրանք անկասկած լավ բրիգադներ եյին, նրանք մրցում եյին մի շարք քանակական ու վորակական ցուցանիշների համար։ Բայց նրանք չունեյին բրիգադային արդֆինպլան, վորի մեջ յուրաքանչյուր բրիգադ կարողանար տեսնել թե ինչ գումար պետք է ծախսի հումքի ու կիսաֆաբրիկատի վրա, օժանդակ

նյութերի, աշխատավարձի վրա և այլն, վորպեսզի կարողանա այդ համեմատել բրիգադում կատարվող իսկական ծախքի հետ։ Ահա այդ կլիներ բրիգադի իսկական տնտեսական հաշվարկ։ Դրա հիման վրա հնարավոր կլիներ վոչ թե ընդհանրապես, վոչ թե ամբողջ ձեռնարկության գծով, այլ յուրաքանչյուր առանձին բրիգադում պայքարել աշխատանքի վորակական ցուցանիշների համար—ինքնարժեքի իջեցման, արտադրանքի վորակի լավացման, աշխատանքի արտադրողականության բարձրացման համար։

Յեվ ահա, արտադրական նախահաշվի բացակայության, այդ նախահաշվի կատարման հաշվառման բացակայության հետևանքով հարկավոր յեղավ մի ամբողջ շարք ձեռնարկություններում տնտհաշվարկային բրիգադի կոչումից զրկել կազմակերպված բրիգադները։ Տնտեսական հաշվարկը ամենից առաջ ռուբլով կոնտրոլ է։

Իսկ ինչ է հարկավոր տնտհաշվարկային բրիգադներում այդ ռուբլով կոնտրոլը կազմակերպելու համար։ Դրա համար հարկավոր է յերկու պայման — պլանավորում և հաշվառում։

Մարիուպոլի Լենինի անվան գործարանի հերթային-հանդիպական պլանավորման փայլուն փորձը մեզ տալիս է այն օրինը, վորով պետք է ընթանա նաև տնտհաշվարկային բրիգադների օպերատիվ պլանավորումը։ Ինչպես են մարիուպոլցիները կիրառում իրենց հերթային հանդիպական պլանը։ Բերենք այստեղ այդ միջոցառման նկարագրությունը հենց իրենց նախաձեռնողների խոսքերով։

«Յերբ բրիգադը կամ հերթը աշխատանքի յե գալիս, նա տեսնում է, վոր յուրաքանչյուր ագրեգատի, յուրաքանչյուր դոմենյան կամ մարտենյան վառարանի մոտ հատուկ տախտակների վրա նշանակված են օրվա առաջադրության ցուցանիշները։ Դեռ նախքան բրիգադայինների գալը, բրիգադի յեռանկյունին վարպետի հետ միասին քննության է առնում ագրեգատների դրությունը, նյութերի առկայությունը, դասավորումը և այլն։ Այս տվյալների հիման վրա յեռանկյունին առաջարկ է մտցնում, վորպեսզի այսօր փոխանակ՝ ասենք թե 30 տոննի առաջադրության, տվյալ մարտենում ձուլել 32 տոնն և ձուլումը շարունակել վոչ թե 8 ժամ, այլ իջեցնել 7 ժամի։ Այնուհետև պողպատ հալող վարպետը հրավիրում է բրիգադին։ Նա հարցնում է,



— Տվեք, տեսնենք առաջադրությունը։

— Տեսանք։

— Յեռանկյունին առաջարկում է այսինչ հանդիպականը։ Նյութերով ապահովված ենք այսքանով։ Ի՞նչ է ձեր կարծիքը։

Սկսում են արտահայտվել։ Յեթե վորևե մեկը տեսնում է, վոր յեռանկյունին վորոշ բան աչքաթող է արել, ասում է այդ մասին։ Մտցնում են առաջարկներ, լրացումներ։ Ուշի ուշով քննարկելուց հետո տախտակի վրա գրում են հանդիպական պլանի ցուցանիշները։

Յեվ հենց վոր վառարանների վրա աշխատող բրիգադներն առաջադրեցին իրենց հերթային-հանդիպականը, այդ անմիջապես ստիպեց ցեխի մյուս բրիգադներին ևս հերթային-հանդիպական պլաններ մշակել։ Մեքենավարները տեսնելով, վոր վառարանների վրա աշխատող բրիգադները մեկ ժամով կրճատեցին ձուլման ժամանակը, իրենց հերթին վորոշում են կրճատել նաև իրենց աշխատանքի ժամանակը։ Մեքենավարի մոտ ևս կախված է հատուկ տախտակ իր առաջադրության և իր հանդիպականի ցուցանիշներով։ Այդպես նաև առուների վրա աշխատող բրիգադները նկատի ունենալով այն, վոր հալված պողպատը գալու յե վոչ թե 3, այլ 2 ժամից, առուներ պատրաստելու աշխատանքը կրճատում են համապատասխան չափով։ Այդ էլ նրանք գրում են իրենց տախտակի վրա։

Աշխատանքն ավարտելուց հետո արդյունքները գրանցվում են նույն տախտակների վրա, և բոլորը տեսնում են առաջադրությունը, հանդիպականը, կատարումը։ Այս տվյալների հիման վրա կատարվում է հերթափոխությունը։ Կուսկազմակերպիչը հաղորդում է կուսկազմակերպչին, արհկազմակերպիչը՝ խումբկազմակերպչին, բրիգադիրը՝ բրիգադիրին։

Նրանք ասում են — այսօր մենք հաջողություն ունեցանք շնորհիվ այսինչ հանգամանքների կամ ընդհակառակը — նկատի ունեցեք, վորովհետև մենք այսինչ խնդրում տակը մնացինք։

Մենք բրիգադին չենք ծանրաբեռնում աշխատանքից հետո խորհրդակցություններ կազմակերպելով, վորովհետև դա շատ կհոգնեցներ։ Դրա դիմաց մենք խորհրդակցություններ ենք կազմակերպում հնգօրյակում մեկ անգամ. այդ խորհրդակցություններում մենք պարզում ենք, թե ինչո՞ւ տվյալ հնգօրյակում լավ հաջո-

ղություններ ձեռք բերինք, կամ ինչո՞ւ պարտություն կրեցինք: Այս խորհրդակցությունների շնորհիվ մենք ուղղումներ ենք մտցնում հաջորդ հերթական աշխատանքում։ (Հերթային — հանդիպական պլանավորման փորձի փոխանակման նպատակով ՀԱՄԿԿ-ի կազմակերպած համամիութենական խորհրդակցությունում ընկ. Կուչերենկոյի տված զեկուցումից, տես «Պրավդա», 1931 թ. հունիսի 5-ի 18-րդ համարում)։

Այսպիսին է հերթային— հանդիպական պլանի կիրառման կարգը Մարիուպոլի գործարանում: Այդ փորձը պետք է օգտագործի ամեն մի տնտհաշվարկային բրիգադը: Հարկավոր է այնպիսի կարգ սահմանել, որ ոչ մի տեղամասում իր բրիգադի ցերանկյունները ([illegible] չկա, բրիգադիրը և պրոֆխմբկազմակերպիչը) նախքան աշխատանքն սկսելը՝ նշի հերթի առաջիկա աշխատանքի բոլոր անհրաժեշտ միջոցառումները այն և՛ պարզի նախորդ օրվա աշխատանքի անհարթությունները, երևան հանի ընդհանուր տեղ բռնած ուժերի դասավորումը, վորոշակի առաջադրանքներ ներկայացնի բրիգադին: Այս աշխատանքին մասնակից են դարձվում նաև մեկ կամ մի քանի բրիգադայիններ, վորոնք հետագայում պետք է մասնակցեն նաև տնտհաշվարկային լեռդաշի բանվոր-պլանավորողներ:

Բանվոր-պլանավորողը, վորն այսպիսով դառնում է բրիգադային ցերանկյունու իսկական օգնականը օպերատիվ պլանավորման գործում, հետևաբար իրավունքներ ունի — ցեխի հաշվառման բյուրոյից ստանալ հաշվետու տվյալները, վարել բրիգադային հաշվառման տախտակ (պլան-հանդիպական-կատարողական ցուցանիշներով) օգնել ցերանկյունուն հաջողությամբ կատարել աշխատանքի նոր տեղը և կապ պահպանել ցեխի պլանային բյուրոյի բաշխիչ բյուրոյի հետ:

Աշխատանքից 10 րոպե առաջ բրիգադը պետք է քննարկի ցերանկյունու պատրաստած առաջադրանքները և նկատառումները: Աշխատանքն ավարտելուց հետո հերթը հանձնելիս հաջորդ հերթի ցերանկյունին և պլանավորողը իրազեկ են դարձնում կատարված աշխատանքի և եղած դժվարությունների կամ անհարթությունների մասին։

Հերթային-հանդիպական պլանավորման փորձը կիրառվում է Մոսկվայի մի շարք ձեռնարկություններում և գնալով ավելի ու ավելի է ծավալվում: Ձերժինսկու անվան գործարանում հունիս ամսվանից կիրառվող հերթային-հանդիպական պլանա-



վորումը հնարավորություն է տվել բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը: Այսպես, եթե մինչև հերթային-հանդիպական պլանավորումը կիրառելը աշխատանքի արտադրողականությունը տնտհաշվարկային բրիգադներում բարձրացել էր 8,4%-ով, ապա աշխատանքի կազմակերպման այս նոր ձևի կիրառումը հնարավորություն տվեց արտադրողականությունը բարձրացնել ևս 7%-ով: Այսպիսով, աշխատանքի արտադրողականության աճման տեմպը կրկնապատկվեց: Հերթային-հանդիպականը նույնպես օժանդակեց արտադրանքի վորակի բարձրացման գործին:

Ահա թե ինչպես են նկարագրում տնտհաշվարկային բրիգադներում հերթային-հանդիպական պլանի կիրառման արդյունքները ու կարգը տնտհաշվարկային բրիգադների անդամները*):

«Հերթային հանդիպականը մեզ օգնեց բարելավելու բրիգադային պլանավորումը և աշխատանքի հաշվառումը, ավելի արագ մանյովրի մեջ դնել եղած նյութական ռեսուրսները ու բանվորական ուժը:

Հերթային հանդիպականը մենք հետևյալ կերպ ենք մեզ մոտ կիրառում: Մինչև աշխատանքն սկսելը վարպետը տալիս է բրիգադի առաջադրությունը: Բրիգադը 10 րոպե տևող արտախորհրդակցությունում քննության է առնում ստացած առաջադրությունը: Ստուգում ենք, կշռադատում ենք դրությունը — մեքենաների վիճակը, հումքի առկայությունը և այլն: Հենց այդ տեղ էլ բանվորներից մեկն ու մեկը առաջարկում է ավելացնել վարպետի տված արտադրական առաջադրությունը: Պատճառաբանելով իր առաջարկը հերթի հումքի և մեխանիզմների պատրաստականությամբ, ընկերն առաջարկում է ընդունել: Այս 10 րոպեի ընթացքում մեզ հաջողվում է քննել պլանը, հաստատել հանդիպականը և առաջադրված թիվը գրանցել վարպետի տված արտադրական առաջադրության դիմաց:

Աշխատանքն ավարտելուց հետո բրիգադի բոլոր անդամները նշում են իրենց արտադրանքը և գործադրած ժամանակը և այն ժամանակ միայն հերթային տեղեկագիրը, զարդյալ վարպետի ու բրիգադավորի ստորագրությամբ, առավոտյան գնում է պլանային-արտադրական բաժինը, վորտեղ կենտրոնացված է

*) Տես «Պրավդա» յի 1931 թ. օգոստոսի 3-ի համարում «Большие дела на маленьком заводе. Месяц применения сменно-встречного плана» հոդվածը:

հաշվառումը։ Հերթի աշխատանքի արդյունքները գրանցվում են նաև հատուկ տախտակի վրա, վորը կախված է լինում աշխատավայրում։

Արդյունքն այն յեղավ, վոր գործարանը գերակատարեց հալիոյան ծրագիրը 113,5%-ով, իսկ աշխատանքի արտադրողականության բարձրացման պլանը՝ 117,1%-ով, այնինչ բանվորները նախատեսվածի 86%-ի չափով միայն։

Տնտհաշվարկային բրիգադը հերթային-հանդիպական պլանի կիրառման հետևանքով դառնում է գործարանի օպերատիվ պլանավորման սկզբնական բջիջը։ Այդ հնարավորություն է տալիս կոնկրետ կերպով, գործնականորեն մոտենալ նաև ներգործարանային պլանավորման հարցի լուծմանը, մի հարց, վորի թերությունների ու ցավոտ կողմերի մասին շատ խոսվում է գրվում, բայց գործնականորեն գրեթե վոչինչ չի արվում։ Ահա թե ինչպես մոտեցան այդ հարցին Զեմլյաչկայի անվան գործարանի տնտհաշվարկային բրիգադները։

«Հերթային-հանդիպականը հաճախ վիժում էր համագործարանային պլանավորման թերությունների պատճառով, և այժմ մեր գործարանում հարց է դրված այնպիսի կազմակերպություն ստեղծել ցեխերում, վոր՝ օգնի վարպետին ավելի լավ պլանավորելու բրիգադային ու ցեխային աշխատանքը։ Մենք դրա համար ստեղծեցինք մի յեռյակ՝ բաղկացած փոխադարձաբար միմյանցից կախված յերեք օպերացիաների բանվորներից։

Այսպիսին է այն ճանապարհը, վորով բանվորական պլանավորումն արմատանում է ամբողջ գործարանի աշխատանքում, տնտհաշվարկային բրիգադներ կազմակերպելու հիման վրա և հերթային-հանդիպական պլանավորում կիրառելու հետևանքով։ Վոչ մի կասկած չկա, վոր համագործարանային ու ցեխային պլանային խմբեր կազմակերպելը բանվորական պլանավորման ու սիստեմի կազմակերպման ամենից ավելի ճիշտ ճանապարհն է։ Այս ճանապարհն իր ժամանակին շատ անգամ է նշվել կոմյերիտական պլանային-օպերատիվ խմբերի կազմակերպման ընթացքում։ Տնտհաշվարկային բրիգադների մասսայական կազմակերպման ներկա պայմաններում բանվորական պլանավորման այս սիստեմը ստանում է անհրաժեշտ արտադրական բազա և, հենվելով յուրաքանչյուր բրիգադի բան-



վոր պլանավորողների վրա, ընդգրկում է վոչ միայն բանվոր յերիտասարդության, այլև չափահաս բանվորներին։

Տնտհաշվարկային բրիգադում պլանավորման հետ միասին պետք է լուծել նաև հաշվառման խնդիրները։ Ճիշտ է, ներկայումս դեռևս հնարավորություն չկա վերջնական ձևով տալ հաշվառման ու հաշվետվության սիստեմը տնտհաշվարկային բրիգադի լավագույն սպասարկման համար։ Մենք այստեղ խոսում ենք հաշվառման ու հաշվետվության այն սիստեմի մասին, վորը պետք է սպասարկի բրիգադին, վորովհետև բրիգադում, իբրև կանոն, արտադրական հաշվառում ու հաշվետվություն չպետք է տարվի։ Հաշվառումն ու հաշվետվությունը ամբողջապես դրվում են ցեխի վարչության վրա, համաձայն տնտհաշվարկային բրիգադի պայմանագրի համապատասխան կետի։ Իսկ բրիգադը տանում է լոկ հասարակական հաշվետվություն, մասնավորապես օգտագործելով նաև ցեխի հաշվառման — պլանային բջջի թվական տվյալները։ Ամենաշատը՝ բրիգադավարն օրագիր է պահում, ուր հաշվի յե առնում բրիգադի աշխատանքի արդյունքներն ու ընթացքը։ Ահա այդ է բրիգադի ամբողջ «վիճակագրությունը»։ Մանավանդ վոր հազիվ թե հարկ լինի մտցնել վորևէ ստանդարտային ու յուրատեսակ «դիմազրկված» սիստեմ։ Առանձին արտադրությունների նկատմամբ այս սիստեմը պետք է տարբերիչ առանձնահատկություններ ունենա։

Այնուամենայնիվ տնտհաշվարկային բրիգադների հաշվառման և հաշվետվության աշխատանքի հիմնական տարրերի մասին կարելի յե և պետք է խոսել։

Տնտհաշվարկային բրիգադների լավագույն աշխատանքն ապահովելու համար անհրաժեշտ է հաշվառման ու հաշվետվության խնդրում, յեթե վոչ ամբողջապես լուծել, գոնե համենայն դեպս նշել հետևյալ յերկու հարցերի լուծումը — առաջին՝ տնտհաշվարկային բրիգադի աշխատանքի ընթացիկ օպերատիվ հաշվառման կարգը և յերկրորդ՝ ցեխի միջոցով տնտհաշվարկային բրիգադի աշխատանքի արդյունքները հաշվառման յենթարկելու և այդ արդյունքները վերլուծելու կարգը։

Թե մեկ և թե մյուս հարցերը կարող են նշանակալից չափով լուծում ստանալ հերթային կալկուլյացիա կիրառելու պրակտիկայի միջոցով։ Հերթային կալկուլյացիայի օրինակ կարող է ծառայել Մոսկվայի Իլյիչի անվան գործարանում մարտենյան վառարանի կալկուլյացիան, վոր կատարվում է յուրաքան-

չյուր ծուլման համար առանձին։ Սակայն հարկավոր է նշել, վոր մի քանի առանձին փորձերի բացառությամբ ներկայումս դեռևս չենք կարող խոսել տնտհաշվարկային բրիգադների լավագույն սպասարկման համար հաշվառման ու հաշվետվության փորձարկված մշակված սիստեմի մասին։

Հենց դրա համար էլ ներկայումս անհրաժեշտ է դնել հաշվառման ու հաշվետվության հարցը, վորովհետև միանգամայն ակներև է, վոր այս խնդիրը կարող է լուծվել միայն այն ժամանակ, յերբ ձեռնարկություններում մենք գործնական փորձ կունենանք։ Հաշվառման սիստեմը պետք է տրվի ամենաքիչ ժամանակում, պատրվակ չբերելով նրա մշակված չլինելը, ինչպես այդ անում են մեր շատ տնտեսավարները։

Տնտհաշվարկային բրիգադի ոպերատիվ հաշվետվությունը պետք է տրվի հավանաբար ամենօրյա գրանցումներով և ամփոփվի հնգօրյակներով կամ տասնօրյակներով։ Այս գրանցումները կամ պետք է արդյունք լինեն գոյություն ունեցող ձևերի օգտագործման, կամ յեթե պահանջվում է այդպիսին նոր մտցնել, չափազանց փոքր աշխատանք պահանջելիս կլինեն։ Յեվ դրա հետ միասին նրանք պետք է ընդգրկեն բրիգադի աշխատանքի հիմնական կողմերը, հետևաբար պետք է լինեն չափազանց տեսակավորված։ Հիմնական պահանջը— ոպերատիվ հաշվառումը պետք է այնպես լինի, վոր դեռ նախքան աշխատանքի սկսելը բրիգադները տեղեկություն ունենան նախորդ օրվա աշխատանքի մասին։ Տնտհաշվարկային բրիգադներն այդպիսի պահանջ պետք է առաջադրեն ցեխի վարչությանը, յեվ այդ պահանջը պետք է կատարվի, յեթե մենք իրոք կամենում ենք բրիգադում ոպերատիվ հաշվառում նախատեսել։

Իբրև պարտադիր մինիմում կարելի յե առաջադրել հաշվառման հետևյալ մոմենտները.

1. Արտադրանքի մշակումը մեկ օրում կամ վորոշ ժամանակամիջոցում, վոր համապատասխանելիս լինի արտադրության տվյալ ցիկլին յեթե վոչ ամենայն արտահայտությամբ, ապա համենայն դեպս գոնե հիմնական տեսակի արտադրանքների և ֆաբրիկատների նատուրալ արտահայտությամբ։

2. Փաստական բանվորական ժամանակի ծախսերը, յեթե վոչ ժամերով, ապա համենայն դեպս մարդ-օրերով։

3. Բանվորական ժամանակի կորուստները յեվ հատկապես ինչպես սարքավորումների, այնպես էլ մարդկանց պարապուրդների հաշվառումը, ցույց տալով պարապուրդների պատճառները։



4. Բրիգադի տրամադրության տակ դրված նյութերի հիմնական տեսակների հաշվառումը, յեթե վոչ արժեքային, ապա համենայն դեպս նատուրալ արտահայտությամբ։

Ոպերատիվ հաշվառման այս չորս տարրերը հնարավորություն են տալիս բավականաչափ և անհրաժեշտ կոնկրետ պատկերացում ունենալ աշխատանքի ընթացքի մասին այնպիսի հիմնական հարցերում, ինչպիսին են՝ արտադրական առաջադրանքի կատարումը, աշխատանքային կարգապահության դրությունը, բանվորական ժամանակի անարտադրական կորուստներն ու սարքավորման թերբեռնումը և նյութերի ծախսման դրությունը։

Այսպիսի ոպերատիվ հաշվառման արդյունքն՝ ըստ ամենօրյա գրանցումների՝ պետք է մեխանիկորեն գումարել հնգօրյակներով և տասնօրյակներով, ապա տալ ամսվա անցած օրերի հանրագումարը մոտավորապես հետևյալ ձևով.

| ՈՊԵՐԱՏԻՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | 3-ՐԴ ՀՆԳՕՐՅԱԿ | | | | | | Ընդամենը ամսվա սկզբից | Բացատրություն-ներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 11/VIII | 12/VIII | 13/VIII | 14/VIII | 15/VIII | Ընդամենը 11/VIII—15/VIII | | |
| | | | | | | | | |

Այդպիսին է, կրկնում ենք, ոպերատիվ հաշվառման մոտավոր ձևը տնտհաշվարկային բրիգադում։

Տնտհաշվարկային բրիգադների աշխատանքի արդյունքների հաշվետվության վերաբերմամբ մեկ ամսվա հաշվառման փորձը, վոր կատարեց Մոսկվայի պրոֆխորհուրդը հաշվառման աշխատակիցների միավորման հետ միասին, հնարավորություն է տալիս սահմանել հաշվառման ավելի վորոշակի մի ձև, վորը բավականաչափ արդեն փորձված է պրակտիկայում։ Սակայն այստեղ էլ պետք է անել այն վերապահությունը, վոր, առաջին, նա չի կարող վերջնական համարվել և յերկրորդ՝ տնտհաշվարկային բրիգադների, [illegible] և զանազան արտադրություն-

ների տարբեր բնագավառների աշխատանքի արդյունքների հաշվառման ձևն անկասկած կպահանջի նրանց վորոշ մասերում մտցնել այնպիսի ցուցանիշներ, վորոնք յուրահատուկ են աշխատանքի տվյալ ճյուղի համար։

Միաժամանակ հարկավոր է ուշադրություն դարձնել այս հաշվառման մի կողմի վրա, վոր ամենից ավելի ընդհանուր է, այն է՝ ռուբլով կոնտրոլի վրա։ Քանի վոր ամբողջ տնտհաշվարկային բրիգադը պետք է ունենա ծախքերի առավել կամ նվազ չափով լիակատար նախահաշիվ, ապա այդ նախահաշվի կատարման արդյունքները վճռական նշանակություն ունեն բրիգադի աշխատանքի գնահատման համար։ Այս հաշվառումը պետք է պատասխան տա այն հարցին, թե ինչպես է կատարվել տնտհաշվարկային բրիգադի արտադրական նախահաշիվը։ Ծախքերի տնտեսում յեղե՞լ է արդյոք (վորով, ինչպես գիտենք, նյութ-կանոնով շահագրգռված է բրիգադը, վորովհետև այդ տնտեսման վորոշ մասն անցնում է բրիգադի տրամադրության տակ՝ պարգևատրման համար), կամ թե ընդհակառակը՝ գերածախս յեղե՞լ է արդյոք։

Բայց դեռ այդ էլ քիչ է։ Տնտհաշվարկային բրիգադի լավ հաշվետվությունը պետք է, բացի այդ, պատասխանի նաև այն հարցին, թե ինչպիսի՞ միջոցառումների հաշվին է ստացվել տնտեսումը, կամ ի՞նչ պատճառով է տնտհաշվարկային բրիգադի արտադրական ծախքերի գերածախս յեղել։ Այս հարցին պատասխանել նշանակում է վոչ միայն հաշվի առնել բրիգադի աշխատանքը, այլև վերլուծել այն։ Տնտհաշվարկային բրիգադների աշխատանքի արդյունքների հաշվառման փորձը, վորն իր ժամանակին կատարեց Մոսկվայի պրոֆխորհրդի արտադրության և պլանավորման սեկտորը, ցույց տվեց նրա վոչ մի կասկածի չենթարկվող վորակական առավելությունները։ Այդ հաշվառման հետևանքով իր ամբողջ նշանակությամբ և լիակատարությամբ յերևան հանվեց այն, ինչ չկա վոչ մի կալկուլյացիոն հաշվետվությունում և կարող է ստացվել միայն բրիգադի հետ միասին աշխատանքի արդյունքները քննության առնելու հետևանքով։

Այդ ցույց տանք Զեմլյաչկայի անվան գործարանի յերկու բրիգադների օրինակով, վորոնցից մեկը մայիս ամսին տնտեսում տվեց, իսկ մյուսը հիմնական օժանդակ նյութերի գերածախս ունեցավ (տես աղյուսակը 41-րդ էջում)։



ԶԵՄԼՅԱՉԿԱՅԻ ԱՆՎԱՆ ԿԱՇԵԳՈՐԾԱՐԱՆԻ ՅԵՐԿՈՒ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ԾԱԽՔԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

| Ծախքերի հոդվածները | Ըստ վորչության առաջադրության | Ըստ բրիգադի հանդիպական պլանի | Փաստական ծախսումը | Յելնելով փաստական կատարումից, պետք եր ծախսել | Տնտեսում (+) կամ գերածախս (—) | Պարզաբանումներ |
|---|---|---|---|---|---|---|
| **Դաբաղների բրիգադ, 10 հոգի** | | | | | | 1. Տնտեսումը ստացվեց շնորհիվ եղանակը լավ լինելու, տարայի բացման ու կշռման նկատմամբ խնամքոտ և ճշտապահ վերաբերմունք ունենալու, կպած ու թափած նյութերի օգտագործման, բարաքանները ժամանակին դադարեցնելու և փորձի գնելու։ 2. Օժանդակ նյութերի տնտեսում՝ շնորհիվ տարայի և արտահագուստի խնամքոտ օգտագործման։ |
| 1. Հիմնական նյութերի (խիմիկալիաների) ծախսում | — | — | 10.252 ռ. | 12.589 ռ. | + 2.337 ռ. | |
| 2. Օժանդակ նյութերի ծախսում | — | — | 4 ռ. 90 կ. | 54 ռ. 41 կ. | + 49 ռ. 51 կ. | |
| 3. Աշխատավարձ | — | — | 794 ռ. 18 կ. | 772 ռ. 21 կ. | — 21 ռ. 97 կ. | |
| **Ներկողների բրիգադ** | | | | | | 1. Գերածախսը ստացվել է շնորհիվ ջրհանի փչացման, վորը ցեխի վորությունը չկարողացավ ժամանակին կարգի բերել, ինչպես նաև շնորհիվ այն բանի, վոր վորակավորման նպատակով բրիգադին ամրացված ներկողները անուշադիր վերաբերմունք էին ցույց տալիս, վորի հետևանքով 7 պարտիա ապրանք վերամշակման յենթարկվեց։ 2. Արտահագուստի օժանդակ նյութերի տնտեսում։ |
| 1. Հիմնական նյութերի ծախսում | 1.376 ռ. 63 կ. | — | 1.881 ռ. 98 կ. | 1.376 ռ. 63 կ. | — 505 ռ. 35 կ. | |
| 2. Օժանդակ նյութերի ծախսում | 38 ռ. 54 կ. | — | 24 ռ. 95 կ. | 38 ռ. 54 կ. | + 13 ռ. 58 կ. | |

Այս հաշվառման արդյունքները յերևան են հանում այն բոլոր հանգամանքները, վորոնք տնտեսում և գերածախս են առաջացնում։ Այսպիսի հաշվետվության նշանակությունը չափազանց մեծ է։ Բրիգադն այստեղ սովորում է ըմբռնել վոչ միայն իր աշխատանքի թվական արդյունքները, այլ և պարզում է աշխատանքի արտադրության պայմանները, վորոնք իրենց յետևից բերում են այս կամ այն արդյունքը։ Ցեվ փորձը ցույց է տալիս, վոր գերածախսի պատճառները պարզելը նույնքան, գուցե և ավելի, արժեքավոր է անհաշվարկային բրիգադի համար, քան թե տնտեսում ապահովող միջոցառումների պարզելը։ Բավական է մատնանշել, վոր նույն ներկողների բրիգադը, վորը մայիս ամսին Ջիմլյանսկայի անվան գործարանում 500 ռ. գերածախս ունեցավ, հետևյալ ամսին, շնորհիվ լավ կազմակերպված հասարակական հաշվետվության, արդեն ուղղեց դրությունը։

Ծախքերի նախահաշվի արդյունքների հաշվառումը մենք նշեցինք վորպես ռուբլով կոնտրոլի հիմնական և մենա անհաշվարկային բրիգադում։ Այս հաշվառման ձևը կախված չէ այս կամ այն արտադրության առանձնահատկություններից և կարող է կիրառվել ամեն մի անհաշվարկային բրիգադում։

Նույնպիսի ընդհանուր ձև կարելի յե սահմանել նաև բրիգադի արտադրական առաջադրության կատարման արդյունքների հաշվառման համար։

Դա մոտավորապես հետևյալ տեսքը կունենա՝

Բրիգադի արտադրական առաջադրությունը

1. Բրիգադի արտադրանքի ընդհանուր արժեքն ըստ վարչության առաջադրության (այսքան ռուբլի)։

2. Բրիգադի արտադրանքի ընդհանուր արժեքն ըստ բանվորների առաջարկած հանդիպական պլանի (այսքան ռուբլի)։

3. Փաստորեն կատարված է (այսքան ռուբլու)։

4. Պլանի կատարման տոկոսը (այսքան տոկոսով)։

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր այնտեղ, ուր արժեքային արտահայտության հետ միասին արտադրանքը չափվում է նաև նատուրալ արտահայտությամբ վորևէ պայմանական միավորներով կամ աշխատանքային միավորներով (տեխնորմավորման բյուրո), հաշվառման այս սխեման կարող է կիրառվել նույնպիսի հաջողությամբ։

Սակայն կան մի շարք այնպիսի հանգամանքներ, վո-



րոնք ընդհանուր ամփոփման չեն յենթարկվում. դա աշխատանքի այսպես կոչված տեխնիկո-կան-տնտեսական ցուցանիշներն են, վոր յուրահատուկ են այս կամ այն արտադրությանը։ Այդպիսի ցուցանիշներ պետք է սահմանել յուրաքանչյուր արտադրության համար առանձին։

Այստեղ, հետևաբար, կարելի յե խոսել հաշվառման ձևի մասին, բայց յերբեք ցուցանիշների ընդհանուր ցուցակ սահմանելու մասին։ Այնուամենայնիվ միքանի ցուցանիշներ այստեղ ևս կարող են մտցվել վորպես աշխատանքի շատ տեսակների համար առավել կամ նվազ չափով ընդհանուր ցուցանիշներ։ Նրանք ցույց են տրված հաշվառման հետևյալ ձևում, վորը ներկայումս իբրև փորձ կիրառվում է Մոսկվայի պրոֆմիությունների կողմից։

| Բրիգադների աշխատանքների ցուցանիշները | Տրված է | Նշված է հանդիպականով | Փաստորեն կատարված է | Պարզաբանումներ ցուցանիշների շուրջը |
|---|---|---|---|---|
| | | | | |

Այս սխեմայի համաձայն կարելի յե տալ հետևյալ ցուցանիշները.

Ա. Ընդհանուր ցուցանիշներ.

1. Վոչհարգելի պատճառներով աշխատանքի չգալը (օրերով)։

2. Սարքավորման պարապուրդները դազգյահ-ժամերով։

3. Մարդկանց պարապուրդները ժամերով։

4. Խոտանի տոկոսը։

5. Խոտանի արժեքը։

6. Մեկ մարդ-օրվա կամ մեկ մարդ-ամսվա արտադրանքը ռուբլիներով։

7. Բրիգադի ներկայացրած ռացիոնալիզատորական առաջարկների թիվը։

Բ. Բրիգադի աշխատանքի հատուկ ցուցանիշներ (ծախսված նյութերի, այսինչ հումքի քանակը, տվյալ բրիգադում կիրառված այսինչ տեխնիկական-տնտեսական ցուցանիշները)։

Սրանով է հաշվառման ընդհանուր սխեման անհաշվարկային բրիգադների համար։ Անկասկած, հետագա պրակտիկան

քին թե շատ վերջնական ձև կմշակի։ Սակայն այսօր էլ միանշանակ անհրաժեշտ են այն պատճառաբանությունները, թե ընտհաշվարկային բրիգադների հաշվառման ու հաշվետվության համար մշակված սիստեմ գոյություն չունի։ Ցեվ լեթե այդպիսի պատճառաբանությաններ մինչև օրս էլ դեռ շարունակվում են, ապա նրանք ցույց են տալիս, մեկ կողմից՝ տնտեսավարների անգործունեությունը, իսկ մյուս կողմից՝ պրոֆկազմակերպությունների վոչ բավարար հաստատակամությունը։

Զգեսք է դանդաղել տնտ աշվարկային բրիգադների հաշվառման ու հաշվետվության կազմակերպման գործում։ Հարկավոր է լիովին օգտագործել առաջավոր ձեռնարկությունների և բրիգադների ցեղած փորձը։

## 6. ՏՆՏՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՑԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ ՄՈՍԿՎԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Տնտհաշվարկային բրիգադների աշխատանքի հաշվառման կազմակերպումը հեշտացնելու համար մենք համառոտ նկարագրենք Մոսկվայի 3 գործարաններում կիրառվող հաշվառման սիստեմը։ Ձեռնարկություններում տնտհաշվարկ արմատացնելու կապակցությամբ ցեխային հաշվառման ներկայումս կատարվող վերակառուցումը պետք է հենակետ ունենա ձեռնարկությունների աշխատանքի պրակտիկան, և ամենից առաջ այստեղ անհրաժեշտ է հաշվառման աշխատակիցների ամբողջ կոլեկտիվի նախաձեռնությունը։

### Ձեմլյաչկայի անվան կաշեգործարան

Ձեմլյաչկայի անվան կաշեգործարանը համեմատաբար փոքր գործարան է, ուստի տնտհաշվարկային բրիգադների աշխատանքի օպերատիվ հաշվառումը կենտրոնացված է արտադրականպլանային բաժնում։ Սկզբնական փաստաթղթերն են — 1) բրիգադի հերթային տեղեկագիրը, 2) տեղեկությունները խոտանի մասին, 3) նյութերի կարգագիրը։

1. Բրիգադի հերթային տեղեկագիրը միաժամանակ նաև կարգագիր (наряд) է։ Ցեխի վարչությունը նախքան աշխատանքն սկսելն այնտեղ գրանցում է տվյալ հերթի առաջադրությունը։ Կարճ քննարկումից հետո բրիգադը սովորաբար առաջադրում է իր հերթային-հանդիպական պլանը և նշում է նույն տեղեկա-



գրում։ Աշխատանքն ավարտելուց հետո բրիգադներից ամեն մեկը գրանցում է իր արտադրանքը և աշխատած ժամանակը։ Բրիգադավարի և ցեխի վարչության ստորագրությամբ հաստատվելով, բրիգադի հերթային տեղեկագիրը վոչ ուշ, քան հաջորդ օրվա առավոտը գնում է արտադրական պլանային բաժինը։

Հերթային տեղեկագիրը հետևյալ ձևն ունի՝

Կոշիկագործների բրիգադի արտադրանքի հերթային տեղեկագիր, 1931 թ. օգոստոսի 17. «1» հերթ

| ԱԶԳԱՆՈՒՆ | Արտադրանք: Սև կաշի | Արտադրանք: Սև հորթի կաշի | Եքսպորտ կաշի | Աշխատած ժամանակը (ժամեր) | Պարապուրդ (ժամերում քան մինչև աշխ. տավարձի) |
|---|---|---|---|---|---|
| Սանդոնովա . . . | 613 | 163 | 176 | 7 | — |
| Շալկովա . . . . . | 537 | 264 | — | 7 | — |
| Գուլգեն Գերշել . . | 588 | 305 | — | 7 | — |
| Բոյկովա . . . . . | 610 | 285 | — | 7 | — |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 2,348 | 1,017 | 176 | 28 | — |

Հերթի պլանն է՝ 3,650 կաշի, հանդիպական պլանը՝ 3,750, կատարված է 4,114։

Բրիգադավար (ստորագրություն)։
Ծիշտ է — վարպետ (ստորագրություն)

Այսպիսով, հերթային տեղեկագիրը տեղեկություն է տալիս բրիգադի ու նրա առանձին անդամների արտադրանքի մասին պայմանական միավորներով — աշխատած ժամանակի, պարապուրդների և նրանց պատճառների մասին։ Ցեղրափակման հանրագումարում տրվում է արտադրանքն ու խոտանը — առաջադրությունը, հանդիպական պլանը և նրա կատարումը։

2. Խոտանի մասին տեղեկությունները կազմվում են տեխնիկական հսկողության բաժնի հսկիչների միջոցով։ Խոտանի հաշվառումը կատարվում է բալլերի սիստեմով՝ բրիգադի յուրաքան-

չյուր անդամի նկատմամբ։ Տեղեկագրում ցույց են տրված խոտանի տեսակները և բալլերի թիվը։ Տեղեկագիրը հետևյալ ձևն ունի.

Տեղեկություններ փառահան մեքենաների խոտանի մասին, 1931 թ. օգոստ. 16

| ԱԶԳԱՆՈՒՆ | Մշակված կոմպլեկտների թիվը | Խոտանի քան. ըստ տեսակի (բալլերով) | | | | | | % % | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Կարճացած մազեր | Թափված մազեր | Մազը թույլ ամրացված | Մազերի [illegible] | Ծածկված մազեր | Ընդամենը խոտան (բալլերով) | | |
| Բերյոզկին | 500 | 5 | 4 | — | — | — | 9 | 1.8 | |
| Նիշկին | 500 | 3 | 5 | — | — | — | 8 | 1.6 | |
| Պոնոմարյով | 200 | 4 | 3 | — | — | — | 7 | 3.5 | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 1200 | 12 | 12 | — | — | — | 24 | 2.0 | |

Խոտանիչ (ստորագրություն)

3. Նյութերի ստացման հաշիվը իրենից ներկայացնում է սյունակների բաժանված մի թերթիկ, վորտեղ թվարկված են բրիգադի համար անհրաժեշտ բոլոր օժանդակ նյութերը։ Պահեստներից նյութեր ստանալու համար սյունակում նշվում է համապատասխան քանակությամբ պահանջվող նյութը, ստացողի ստորագրությամբ։ Արդյունքները հաշվի յեն առնվում ամեն 15 օրը մեկ անգամ, ըստ վորում ցույց է տրվում վոչ միայն վերցված նյութերի քանակությունը այլև գինն ու արժեքը։ Հրատանագի ձևը հետևյալն է. (տես հաջորդ էջերը)։



Ընկ. Գորնվոյեվի կառուցողների բրիգադի կատարած ծախսերը 1931 թ. օգոստոսի 1 կեսին

| Շինարարական փոքր դետալներ (Նորման — 15 կոմպլ.) | | | Կոպրուսնային շրջանակներ (Նորման 2 շրջ.) | | | Լաթեր (Նորման 13 կիլո) | | | Ծանոթ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բաց թողման օրը | Քանակը | Ստորագրութ. | Օրը | Քանակը | Ստորագրութ. | Օրը | Քանակը | Ստորագրութ. | |
| Օգ. 2 | 2 | | օգ. 2 | 2 հատ | | օգ. 4 և այլն | 3 կլգ. | | |
| » 3 | 3 | | | | | | | | |
| » 4 | 1 | | | | | | | | |
| և այլն | | | | | | | | | |
| Ընդ. | 12 | | Ընդ. | 2 | | Ընդ. | 11½ | | |
| Գինը | 25 ռ. 26 կ. | | Գինը | 14 ռ. 28 կ. | | Գինը | 1 ռ. 55 կ. | | |
| Գումար | 303 » 12 » | | Գում. | 28 » 56 » | | Գում. | 13 » 83 » | | |

Այս ձևերով վերջանում է վողջ սկզբնական դոկումենտացիան Ձեմլյաչկայի անվան գործարանում։ Այս տեղեկությունների հիման վրա տարվում է տնտհաշվարկային բրիգադների աշխատանքի հաշվետվությունը հետևյալ կերպ։ Բրիգադի հերթային տեղեկագրի և խոտանի տեղեկագրի նյութերի հիման վրա ամեն օր արտադրական պլանի բաժնում լրացվում է բրիգադի հաշիվը յեվ բրիգադի յուրաքանչյուր անդամի հաշիվը։ Բրիգադների աշխատանքի ընդհանուր արդյունքները արտացոլվում են հատուկ հաշվում, վորն ի մի յե ամփոփում ծախքերի նախահաշվի բոլոր հոդվածների հանրագումարները և ցույց է տալիս բրիգադին հասանելիք պարգևի գումարը։ Բրիգադի հասարակական հաշվետվությունը արտացոլվում է ցուցանիշների տախտակներում, վորոնք կախվում են ցեխերում։ Բերենք կոնկրետ կերպով հաշվետվության այդ ձևերը։

1. Բրիգադի հաշիվն անդրադարձնում է ծրագրի կատարման հաշվառումը, բրիգադի աշխատանքի արտադրողականությունը և հասանելիք աշխատավարձի գումարը։ Բրիգադի հաշվում գրանցումները կատարվում են գումարներն անընդհատ նախորդների վրա ավելացնելով, վորը հնարավորություն է տալիս ցանկացած

ժամանակ իմանալ, թե ինչպես է բրիգադը կատարում իր պարտավորությունները։ Իբրև օրինակ բերենք մի քաղվածք ձևուհայ հղկման բրիգադի օգոստոսի առաջին կեսի հաշվից։

| Ամսաթիվ | Կոշիկներ [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | (Պայմանական միավորներով) [illegible] | Ընդամենը աճողաբար | (Պայմանական միավորներով) % կատարման պլանի | [illegible] | Ընդամենը աշխատած մարդ-ժամեր | Պայմանական միավորներով ըստ օրերի | Ընդամենը աճողաբար | (Պայմանական միավորներով) բանվորի 7 ժամյա արտադրանքը | % կատարման պլանի | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 1 | 2808 | 772 | — | 2785 | 302 | 3554 | 3554 | — | 32 | 32 | 3487 | 3487 | — | — | — |
| 2 | 2318 | 573 | — | 2891 | 291 | 3547 | 7101 | — | 22 | 54 | 3427 | 6914 | — | — | — |
| 3 | 1501 | 501 | — | 2002 | — | 2002 | 9108 | — | 17 | 71 | 2187 | 9051 | — | — | — |
| 4 | 1693 | 610 | — | 2303 | 622 | 3702 | 12805 | — | 33 | 104 | 3695 | 12746 | — | — | — |
| 5 | 2158 | 820 | — | 2972 | 212 | 3455 | 16260 | 102,4 | 24,5 | 126,5 | 3413 | 16159 | 862 | 150,5 | 493,74 |



Այս հաշվից յերևում է, վոր առաջին հնգօրյակում հղկողների բրիգադն արտադրել է 16,260 կոշի (8-րդ սյունյակ)։ Այս թվի և պլանային առաջադրության համեմատությունը տալիս է կուտակման վորոշ տոկոս, վոր ցույց է տրված 9 րդ սյունյակում։ Պայմանական միավորներով նշված ընդհանուր արտադրանքի (13-րդ սյունյակ) և աշխատած ժամանակի (11-րդ սյունյակ) համեմատությունը հնարավորություն է տալիս ուզած բրիգադին հաշվի առնել աշխատանքի արտադրողականության մակարդակը 7-ժամյա բանվորական օրում ինչպես բացարձակ թվերով, այնպես էլ պլանի կատարման տոկոսներով (14-րդ և 15-րդ սյունյակներ)։

2. Բրիգադի անդամի անձնական հաշիվն ավելի պարզ ձև ունի և իրեն նպատակ է դնում հաշվի առնել յուրաքանչյուր բանվորի աշխատած ժամանակը, արտադրանքը և խոտանը, ավելացնելով նաև «Աշխատանքային կարգապահության խախտում» տողը, և վորտեղ նշվում է «զարծալքում» և «ուշացում» և այլն։ Այս ամբողջ գրանցումը կատարվում է առանձին տետրակով, վորը հետևյալ ձևն ունի։

| Ազգանունները և աշխատանքի ցուցանիշներ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | և այլն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Պոլիվայև** | | | | | | | | | |
| ա) աշխատած ժամանակը | 7 | 7 | 7 | — | 7 | 7 | 7 | 7 | |
| բ) արտադրանքը | 333 | 340 | 335 | — | 313 | 310 | 332 | 346 | |
| գ) խոտանը (զույգերով) | 1 | 3 | $2^1/_2$ | — | 2 | $1^1/_2$ | $1^1/_2$ | $1^1/_2$ | |
| դ) խոտանը —%-ով | 0,3 | 0,89 | 0,74 | — | 0,66 | 0,49 | 0,46 | 0,43 | |
| ե) աշխ. կարգապ. խախտում | — | — | — | — | — | — | — | — | |
| **Ցիրոկով** | | | | | | | | | |
| ա) աշխատած ժամանակը և այլն | $3^1/_2$ | | $5^1/_2$ | $3^1/_2$ | 7 | $6^3/_4$ | 6 | $5^1/_4$ | |

Յուրաքանչյուր բանվորի համար այսպիսի հաշիվ պահելը հնարավորություն է տալիս ամսվա վերջում հաշվի առնել ամեն մի բանվորի աշխատանքի արտադրողականությունն ու տված

խոտանը և դրանով իսկ թույլ է տալիս պարգևների ճիշտ բաշխում կատարել բրիգադի ներսում։

3. Բրիգադի աշխատանքի արդյունքների հաշիվն ընդգրկում է բրիգադի տնտհաշվարկի բոլոր տարրերը և հնարավորություն է տալիս յերևան հանելու բրիգադի թե տնտեսումն ու գերածախսը, և թե արտադրանքի բրիգադային ինքնարժեքը։ Բրիգադի աշխատանքի արդյունքների հաշիվը իրենից ներկայացնում է մի յեռամսյակային մատյան, վորտեղ արդյունքները գրվում են կիսամսյակներով և ամիսներով։ Հաշիվը բաժանվում է 2 մասի—ա) նյութեղենի, խիմիկալիաների, արտահագուստի և այլ ծախսերը, բ) բրիգադի աշխատանքի հիմնական ցուցանիշները և ծախսերի նախահաշվի արդյունքները։ Լուսաբանման համար բերենք դաբաղների բրիգադի օրինակը։

Բրիգադի նյութեղենի ծախսերի մասում հորիզոնական տողերով գրվում է թե նշանակված (լիմիտներ) և թե փաստորեն ծախսված բոլոր նյութերի մանրամասն ցուցակը, վորը կազմում է մի քանի տասնյակ անուն։ Այդ ամբողջն իր հերթին բաժանված է յերկու խմբի—վոչ-արտադրական նշանակություն ունեցող նյութեր (դույլեր, ձեռնոցներ, մեքենայի յուղ և այլն) և ուղղակի արտադրական նյութեր (խիմիկալիաներ, գործիքներ ևայլն։)

Ուղղահայաց սյունյակներում ըստ կիսամյակների ցույց է տրված նշանակված լիմիտը (քանակ, գին, գումար), փաստական ծախսումը (քանակ, գումար) և տնտեսումը (+) կամ գերածախսը (—) քանակի և գումարի համեմատությամբ։ Ամսական հանրագումարն իրենից ներկայացնում է ամսվա տնտեսման կամ գերածախսի ընդհանուր գումարը։ Դաբաղների բրիգադում օգոստոսի 16-ից մինչև 31-ը մենք տեսնում ենք նյութերի ծախսման այսպիսի ընդհանուր արդյունքներ—նախատեսնված էր (լիմիտ) ծախսել 12,986 ռ., փաստորեն ծախսված է 12,229 ռ., տնտեսում 757 ռ. 13 կոպ.։

Դաբաղների բրիգադի աշխատանքի ցուցանիշները նույն հաշվում հետևյալ տեսքն ունեն.



**Դաբաղների աշխատանքի արդյունքները**

| ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | Հուլիս | Օգոստոս | և այլն |
|---|---|---|---|
| **1. Պլանի կատարումը** | | | |
| ա) պլան | 83,255 | 83,235 | |
| բ) փաստական կատարում | 86,267 | 88,223 | |
| գ) կատարման % | 103,6% | 106,0% | |
| **2. Աշխատանքի արտադրողականություն** | | | |
| ա) պլան | 521 | 521 | |
| բ) փաստական կատարում | 563 | 600 | |
| գ) կատարման % | 108,1% | 115,2% | |
| **3. Հաստիք** | | | |
| ա) պլան | 9 | 9 | |
| բ) փաստական կատարում | 7,1 | 5 | |
| գ) կատարման % | 71% | 56% | |
| **4. Բրիգադի ծախսերը** | | | |
| I Կիսաֆաբրիկատներ | — | — | |
| II Քիմիական նյութեր ա) պլան | 13,898 | 12,987 | |
| II Քիմիական նյութեր բ) փաստական | 13,231 | 12,230 | |
| III Անարտադ. նյութեր ա) պլան | 28 | 29 | |
| III Անարտադ. նյութեր բ) փաստական | 13 | 14 | |
| IV Խոտան | — | — | |
| V Մեքենաների նորոգում ա) պլան | 83 | 83 | |
| V Մեքենաների նորոգում բ) փաստական | — | 63 | |
| 5. Ծախսերի տարբերությունը | 765 | 792 | |
| 6. Գետք և արվի | 191.26 | 197,90 | |

Բրիգադների հասարակական հաշվետվությունը Զեմլյաչկայի անվան գործարանում ձևակերպվում է ցուցանիշների տախտակների ձևով, վորոնք կախված են ցեխերում, և ընդգրկում է աշխատանքի բոլոր հիմնական ցուցանիշները, ներառյալ առաջադրությունը, հանդիպական պլանը և կատարումը։

### Արգելակների գործարան

Հաշվառման սիստեմը Արգելակների գործարանում փոքրացված է և տարվում է ցեխերում։ Բերենք օդաբաշխիչների (BP) մեխանիկական ցեխի հաշվառումը։ Տնտհաշվարկային բրիգադնե-

րի աշխատանքի հաշվառման կազմակցությամբ վոչ մի լրացուցիչ դոկումենտացիա չմտցվեց։ Հաշվառման կազմակերպման ամբողջ գործում օգտագործվեց այստեղ գոյություն ունեցող դոկումենտացիան: Հաշվետվության հիմնական ձևերն են—1) Բրիգադային տեղեկագրերը. 2) արտադրական ծրագրի կատարման քարտը. 3) գործիքների հաշվառման քարտը, 4) նյութերի և կիսաֆաբրիկատների հաշվառման քարտը, 5) խոտանի հաշվառման քարտը. 6) բրիգադի աշխատանքի արդյունքների հաշվառման քարտը։

Բրիգադի հաշվետվությունը ձևակերպվում է բրիգադի աշխատանքի ցուցանիշների տախտակների միջոցով, ըստ այն ձևի, վորը մշակել է Մոսկվայի պրոֆխորհուրդը։

**1. Արտադրական ծրագրի կատարման բրիգադային տեղեկագիրը** տարվում է տետրակի ձևով և հատկապես տվյալ նպատակի համար ցեխի գրասենյակի կողմից նշանակված հաշվառողի միջոցով։ Հաշվառումը կատարվում է ամեն օր բանվորական թերթիկներով, վորոնց պատճենները մնում են բանվորների ձեռքում և կենտրոնացվում են բրիգադավարի մոտ։ Նրանք հանձնվում են հաշվառողին՝ հենց վոր վերահսկիչ բաժինն ընդունում է աշխատանքը։ Բրիգադի առանձին անդամների աշխատանքի արդյունքները հաշվվում են ըստ նրանց մանրամասնությունների ու օպերացիաների, ապա գումարվելով, գրանցվում են տեղեկագրում, վորը հետևյալ ձևն ունի.

| Մանրամասնության № | Օպերացիայի № | Տողեր | Առաջադրություն: Ամսվա | Առաջադրություն: Օրվա | Փաստական կատարումն ըստ ամսաթվերի: 1 | 2 | 3 | և այլն | ընդամենը I տասնօր. | և այլն | ընդամենը II տասնօր. | Ընդ. ամսվա սկզբ. | և այլն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 500/4 | 4 | ա) պիտանի | 8000 | — | 283 | 290 | 310 | | 2622 | 325 | 2744 | 5366 | |
| | | բ) Խոտան բրիգադի մեղքով | 80 | — | 2 | 4 | 3 | | 17 | 3 | 19 | 36 | |
| | | գ) Խոտան՝ այլ պատճառներով | — | — | — | — | — | | — | — | — | — | |
| 500/4 | 5 | ա) Պիտանի . . | 8000 | — | 302 | 295 | 306 | | 2540 | 310 | 2825 | 5285 | |
| | | Եվ այլն | | | | | | | | | | | |



Այս արդյունքների հաշվելն ու գրանցելը շատ քիչ ժամանակ է խլում։ Նույն հաշվառողն հաջորդ օրվա առավոտյան այս տեղեկությունները գրանցում է «բրիգադի աշխատանքի ցուցանիշների տախտակների» վրա։ Պետք է կարծել, վոր հետագայում այս գրանցումները կկատարվեն բրիգադի անդամների համար առանձին-առանձին։

**2. Արտադրական ծրագրի կատարման քարտը** ի մի յե ամփոփում բրիգադում ելած արդյունքները, հիմք ունենալով բրիգադային տեղեկագրի հաշվարկումները, և հաշվառում է բրիգադի աշխատանքի հիմնական ցուցանիշները—արտադրական ծրագրի կատարման տոկոսը, աշխատանքի լարվածության ցուցանիշը, ինչպես նաև ծառայում է հաշվարկելու աշխատավարձը։

Ցեխ «B. P.» . . . . Նովոսելովայի բրիգադ, 1931 թ. օգոստոս։

| Մանրամասնությունների և օպերացիաների №№ | Ամսվա առաջադրությունը: Ժամանակի նորման | Քանակը | Աշխատավարձ | Փաստական կատարումը: Պիտանի | Խոտան: Բրիգադ. մեղ. | Խոտան: Այլ պատճառ. | Փոխանցված ժամանակի նորմաների բաց ըստ նորմավոր. բյուր: 1 հատին | Բոլոր պիտանի յուղածներին (քանակը) | Խոտան: Բրիգադ. մեղ. | Խոտան: Այլ պատճառ. | Աշխատավարձ: 1 հատին | Բոլորին (քանակը) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 500/4—3 | 93.6 | 8.028 | 48.17 | 7,782 | 1 | — | 0.7 | 5447,4 | 0.7 | — | 0.6 | 46.69 |
| 500/4 - 4 | 154.6 | 8000 | 80,00 | 7,776 | 47 | — | 1.16 | 9088.6 | 54,5 | — | 1.0 | 79.66 |
| և այլն | | | | | | | | | | | | |
| Ընդամենը | 3059 ժամ | — | 1654 ռ. 36 կ. | — | 338 | 4 | — | 2.989 ժամ | 3,1 | 0.06 | — | — |

Ժամանակի փաստական ծախսում՝ 2562 ժամ, լարվածության %-ը—116.7։

Արտադրության առաջադրության կատարման տոկոսն է՝ 97,7։

Այսպիսով բրիգադում ձեռք բերված արդյունքների հաշվառումը տարվում է աշխժամերով՝ ըստ տեխնորմավորման բյուրոյի նորմաների և հաշվվում են բոլոր անհրաժեշտ ցուցանիշները։ Բրիգադի ընդհանուր արտադրանքի համար ծախսված նորմավորված ժամանակի (Զ-րդ սյունյակ—2,989 ժամ) և առաջադրված

ժամանակի (2-րդ սյունյակ—3059 ժ.) համեմատությունը հնարավորություն է տալիս վորոշելու արտադրական ծրագրի կատարման տոկոսը, այս դեպքում՝ 97.7 %։ Նորմավորված ժամանակի (9-րդ սյունյակ) և փաստորեն ծախսված ժամանակի (աղյուսակի ցածում) համեմատությունը հնարավորություն է տալիս վորոշելու աշխատանքի լարվածության պայմանական ցուցանիշը, տվյալ դեպքում՝ 116,7 %։

3. Գործիքների հաշվառման ձևը։ Այս հաշվառման առանձնահատկությունն այն է, վոր գործիքը բաց է թողնվում ու հաշվի յե առնվում մի դեպքում ամբողջ բրիգադի նկատմամբ, մյուս դեպքում՝ ըստ առանձին դազգյահների։ Հաշվառումն ու բացթողումը կատարվում է գործիքների պահեստի միջոցով։

Ըստ դազգյահների գործիքների հաշվառում կատարելը հետևանք եր այն բանի, վոր արդյունաբերության պայմաններից ելնելով մի շարք դազգյահներում աննպատակահարմար եր յուրաքանչյուր հերթի համար գործիքների վերահարդարում կատարել։ Այս դեպքերում գործիքն ամրացվում է տվյալ դազգյահի վրա աշխատող 4 բանվորներին և գործիքի ծախքի տնտեսումը բաժանվում է այս չորս բանվորների միջև։

Քարտը լրացվում է գործիքների պահեստում և հետևյալ ձևն ունի.

Գործիքների հաշվառման քարտ
.....ցեխում, դազգյահ №
....բրիգադ.....

Դազգյահի վրա աշխատում են—
բանվոր №...բանվոր №..
Բանվոր № բանվոր №

| Ամիս և ամսաթիվ | Գործիքի անունն ու չափը | | Բուրղու 1 մմ. | Բուրղու 2 մմ. | Բուրղու 4 մմ. | Պտուտակ և բուրղու 1—8 | Մետչիկներ | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ողջ ամսի համար սահմանված լիմիտը | ա) քանակը | 15 | 25 | 15 | 2 | 4 | | |
| | | բ) արժեքը | 6—00 | 18-75 | 18-00 | 3—00 | 2—20 | | |
| | | գ) ինչ ժամկետով | 1 ամ. | 1 ամ. | 1 ամ. | 1 ամ. | 1 ամ. | | |
| | Փաստական ծախք | | | | | | | | |
| | № 2049 Ֆիշեր..... | | 1 | | | | | | |
| | № 1867 Ծուրավլեվ... և այլն | | — | — | 5 | — | — | | |



Քանի վոր այս ձևի քարտով հաշվառումը կատարված է ամսի վերջում, ապա քարտում գրանցված են 1 ամսվա ընթացքում բրիգադում ծախսված (ջարդված) գործիքների հաշվարկման արդյունքները։ Ցերեկի վերջում հաշվվում է տնտեսման կամ գերածախսի գումարն ըստ առանձին տիպի գործիքների։

Գործիքների ծախքի հաշվառման թույլ կողմը նրանումն է, վոր նրա պակասավոր լինելու հետևանքով հնարավորություն չկա բոլոր անհրաժեշտ գործիքները դնել բրիգադի կամ վորոշ դազգահի վրա աշխատող քառյակի լիակատար տրամադրության տակ։ Շնորհիվ այդ հանգամանքի, գործիքների ծախքի հաշվառման սիստեմը Արգելակների գործարանում նախատեսում է սոսկ գործիքների ջարդվելը, բայց հաշվի չի առնում նրանց մաշելու աստիճանը։

4. Նյութերի և կիսաֆաբրիկատների հաշվառման ձևը կազմված է նույն սկզբունքով, ինչպիսի սկզբունքով կազմված է գործիքների հաշվառման քարտը. կիսաֆաբրիկատների պահեստապետը քարտը լրացնում է նյութերը բացթողնելիս։ Ձուլարանում, վորտեղ բրիգադին բաց թողնվող նյութերը բավական մեծ քանակություն են կազմում, պահեստապետը կատարում է նաև ժամանակ գրանցում տեղեկի միջոցով, վորի հորիզոնական տողերում գրվում է նյութի անունը, իսկ ուղղահայաց սյունյակներում նշվում է բաց թողնվող նյութերի որական քանակությունը։

5. Խոտանի հաշվառման ձևը կազմվում է հատուկ հաշվառողի միջոցով, հիմք ունենալով արտադրական ծրագրի կատարման գրանցումները բրիգադային տեղեկագրում (տես վերև, կետ 1-ին), և ցույց է տալիս բրիգադի մեղքով կատարված խոտանի արժեքը։ Քարտը հետևյալ ձևն ունի.

1931 թ. . . . . . ԱՄՍՎԱ ՀԱՄԱՐ, ՆՈՎՈՍԵԼՈՎԱՅԻ ԲՐԻԳԱԴ

| Ստորաբաժանումների և ոպերացիաների №№ | ԽՈՏԱՆ | | | Խոտանի ծախքերի հաշվարկ |
|---|---|---|---|---|
| | Քանակ | [illegible] | Արժեքը | |
| 500₁—3 | 1 | 1.38 | 1.38 | Սահմանված լիմիտ 304 ռ.—63 |
| 500₁—4 | 47 | 1.38,6 | 65,14 | Փաստ. ծախքի լիմիտ 166 ռ.—53 |
| 500₁₀—3 | 5 | 20,0 | 1.00 | Տնտեսման լիմիտ 137 ռ.—63 |
| և այլն | | | | Գերածախս » — — |

6. Բրիգադի աշխատանքի արդյունքների հաշվառման քարտը ամփոփում է ծախքերի արտադրական նախահաշվի կատարման արդյունքները և իբրև նյութ է ծառայում վորոշելու պարգևի չափը: Քարտը հետևյալ ձևն ունի:

НОВОСЕЛОВАЙИ

ՆՈՎՈՍԵԼՈՎԱՅԻ ԲՐԻԳԱԴ, 1931 Թ. ՈԳՈՍՏՈՍ

| Ծախքերի հոդվածները | Սահմանված լիմիտը ռուբլիներով | Փաստական ծախսումը | Արդյունք: Տնտեսում | Արդյունք: Գերածախս |
|---|---|---|---|---|
| 1) Գործիքներ | 277·55 | 11·45 | 266·10 | — |
| 2) Նյութեր | — | — | — | — |
| 3) Կիսաֆաբրիկատներ | — | — | — | — |
| 4) Աշխատավարձ | — | — | — | — |
| 5) Բրիգադային ծախքեր | | | | |
| ա) մեք. յուղ. լաթեր, կերոսին | 14·47 | 14·47 | — | — |
| բ) ղազգյահների ընթաց. նորոգում | 20·— | 26 — | — | 6·00 |
| գ) Խոտանի արժեքը | 304·16 | 166·53 | 137·63 | — |
| Ընդամենը | 616·18 | 212·45 | 403·73 | 6·00 |

## ՎԼ. ԻԼՅԻՉԻ ԱՆՎԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

Վլ. Իլյիչի անվան գործարանի ձուլարանի ցեխում աշխատանքի հաշվառումը կատարվում է յերկու հաշվառողների միջոցով, ըստ վորում նրանք ամբողջապես չեն բեռնավորված, այլ իրենց ժամանակի մի մասը հատկացնում են ցեխային ընդհանուր հաշվառմանը:

Տնտհաշվարկի անցնելուց հետո հաշվառման ձևերի թիվը չավելացավ: Ցեղած ձևերում հավելումներ կատարվեցին, հատկապես այն մասում, վոր վերաբերում է ըստ բրիգադների նախահաշվային և հաշվետու կալկուլյացիա կատարելուն:

Ամբողջ հաշվառումը կենտրոնացված է 3 ձևերում, յեթե չհաշվենք արտխորհրդակցությունների հերթային—հանդիպական պլանների արդյունքների հաշվառման չափազանց պարզ ձևերը:

Ձև 1-ը արդֆինպլան—առաջադրություն է, վոր բրիգադան ստանում է մեկ ամսվա համար համաձայն տնտհաշվարկային պայմանագրի: Նա ընդգրկում է հիմնական ցուցանիշները—բրիգադի կազմը, արտադրական առաջադրությունը, աշխատանքի փաստական ու նորմավորված մարդ-ժամերի քանակը, աշխատավարձի ֆոնդը, թույլ տրված խոտանը, նախահաշվային կալկուլյացիան ըստ առանձին տարրերի, մասնավորապես ոժանդակ նյութերն ու գործիքները:



Արդֆինպլանի ձևն հետևյալն է.

### № 228 ԿՈՐԿԻՆԻ ԲՐԻԳԱԴԻ ԱՐԴՖԻՆՊԼԱՆԸ, 1931 Թ. ՈԳՈՍՏՈՍ

### 1. ԲՐԻԳԱԴԱՅԻ ԿԱԶՄԸ

| Ազգանուն և № | Կարգ | Պրոֆեսիա | Աշխատանքի փաստական ժամերը | —4% ժամանակի կորստի համար | +11% Նորմայի վերամշակ. համար | —1% նորմալ խոտանի համար | Նորմավորված ժամեր կատարման նկատմամբ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 228 Կորկին | 3 | Կաղապարող | 168 | 7 | 18 | 2 | 177 |
| 31 Ֆրոլով | 3 | | 168 | 7 | 18 | 2 | 177 |
| և այլն | | | | | | | |
| Ընդամենը | — | — | 689 | 29 | 73 | -- | 225 |

### 2. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

| Անուն | Ոպերաց. | Խումբ | Մոդելի №№ | Քանակ | Նորմավորված ժամանակը, վոր անհրաժեշտ է: 1 հատի | Նորմավորված ժամանակը: ընդհ. | Քաշը կգ.: 1 հատի | Քաշը կգ.: ընդհ. | Աշխատավարձ: 1 հատի | Աշխատավարձ: ընդհ. | Նախահաշվային ցեխային արժեք: 1 հատի | Նախահաշվային ցեխային արժեք: ընդհ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շրջանակներ | Կաղապարում | 36 | 12055 | 52 | 14 | 728 | 770 | 40040 | 47 | 47 | 70 | |
| | | | | | | | | | 11 | 596 | 318 | 1736 |

### 3. ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Բրիգադի կազմը . . . . . . . . . . . . . . 5 հոգի

Աշխատանքի մարդ-ժամերը . . . . . . . . . . 840 ժամ

Աշխատավարձի ֆոնդը և հավանական խոտանը՝ 1%

602 ռ. 40 կ.

